Ազգ

Azg
armenian daily

17 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2000 ԵՐԵՔՇԱԲԹԻ 184 (2152)

«Վաշինգտոն թայմս». Աշխարհի մեծ մասը անարդար է հայերի նկատմամբ

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 16 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊԱՆ: «Վաշինգտոն թայմս» օրերս ընդարձակ հոդվածով անդրադարձել է Հայոց ցեղասպանության հարցին: Թերթը գրում է, որ Ցեղասպանությունը մերժողները մեղսակիցներ են եւ հրահրում են դրա կրկնությունը: «Աշխարհի մեծ մասի կողմից անարդարություն է գործադրված այն 1,5 մլն հայերի նկատմամբ, որոնք սպանվել են 1-ին համաշխարհային պատերազմի տարիներին եւ ավելի ուշ, երբ թուրքերը իրենց պետությունն էին հիմնադրում»,-գրում է «Վաշինգթոն թայմսը»: Թերթը մեջբերում է պատմաբան Ռոբերտ Մելսոնի այն հայտարարությունը, թե «Հայոց եղեռնը ընթացիկ դարաշրջանի առաջին ցեղասպանությունն է եւ նախադեպ եղավ ոչ թե միայն Հոլոկոստի, այլեւ մի շարք ուրիշ ցեղասպանությունների համար, որ իրականացվեցին արդեն մեր օրերում երրորդ աշխարհի երկրներում եւ եսխորհրդային տարածքներում: Կասկած չկա, որ Թուրքիան մեր նշանակալի դաշնակիցն է եւ կառուցողական միջնորդ Միջին Արեւելքի տարածաշրջանում: Բայց Միացյալ Նահանգները չի կարող փոխել պատմությունը հանուն իր աշխարհաքաղաքական եւ տնտեսական շահերի», ասվում է թերթում:

ՏՈՄՍԱԿ

Հա՞յ դաս, թե՞ Դաշնակցության դաս

Հյուսիսային եւ Հարավային Ամերիկաներից օրերս Հայաստան ժամանած ՀՅԴ Բյուրոյի անդամների ներկայությունն առիթ հանդիսացավ, որ Դաշնակցությունը «սեփականաշնորհի» Մ. Նահանգների Կոնգրեսում Հայոց ցեղասպանության բանաձեւի ընդունման՝ առայժմ հայանպաստ ողջ գործընթացը: Հեռուստատեսություն, ռադիո եւ տպագիր մամուլ այս օրերին ողողված են ՀՅԴ գործիչների ինքնագոհ եւ ինքնագովերգող արտահայտություններով:

Ոչ ոք չի պատրաստվում նսեմացնել Հայ դատի հետապնդման գործում ՀՅԴ-ի եւ նրա տարբեր կառույցների՝ մասնավորաբար Հայ դատի հանձնախմբերի դերը: Հատկապես արդյունավետ է գործում ՀՅԴ Հայ դատի Վաշինգտոնի գրասենյակը, որը բացի լոբբիինգից, ինչն անում են նաեւ ամերիկահայ մեր մյուս կազմակերպությունները, շահագրգիռ շրջանակներին եւ անհատներին օր-օրին իրազեկ է պահում կատարվող աշխատանքներին, բողոքի կամ քաջալերանքի ակցիաներ է կազմակերպում ամերիկահայ շրջանակներում: Եվ ամենակարեւորը՝ չի հոխորտում, չի շեփորում սեփական աշխատանքները: Ի տարբերություն ՀՅԴ Բյուրոյի հայաստանյան թե սփյուռքահայ որոշ անդամների, ըստ երեւույթին ՀՅԴ Վաշինգտոնի գրասենյակում հասկանում են, որ Հայ դատի, ի մասնավորի Հայկական բանաձեւի ընդունման գործը հավաքական աշխատանք է պահանջում: Առաջնորդ՝ հիշյալ գրասենյակից կամ ՀՅԴ Կալիֆորնիայի օրգան «Ասպարեզի» խմբագրությունից վերջին օրերին ստացված անգլերեն հաղորդագրությունների ներքո գրվում է, որ «Հայոց ցեղասպանության բանաձեւը ակտիվ կերպով օժանդակվում է ամերիկահայ տարբեր կազմակերպությունների **համախմբման** (ընդգծումն իմն է-Հ. Ա.) կողմից», եւ այբբենական կարգով հիշվում են այդ կազմակերպությունների անունները՝ Հայ կաթոլիկների էկզարխություն, Ամերիկայի հայկական համագումար, Հայ իրավաբանների ընկերակցություն, Հայ ավետարանչական համաշխարհային խորհուրդ, Հայկական բարեգործական ընդհանուր միություն, Ամերիկայի հայկական միսիոներական ընկերակցություն, Հայ ազգային խորհուրդ (ՌԱԿ), Ամերիկայի հայկական ազգային կոմիտե (ՀՅԴ), Հյուսիսային Ամերիկայի հայկական նոպաստամատույց ընկերություն, Հայ եկեղեցու Ամերիկայի Արեւելյան եւ Արեւմտյան թեմեր, Հայ եկեղեցու Ամերիկայի Արեւելյան եւ Արեւմտյան Կիլիկյան թեմեր, Վարդանանց ասոցեներ:

Տրամաբանորեն, չէ՞, մեր հավաքական կամքը Մ. Նահանգների տարածքում արտահայտող այս ցուցակը, նույնիսկ՝ խանդավառող: Սակայն, ավա՜ղ, ըստ երեւույթին այն ամենեւին չի խանդավառում Բյուրոյի որոշ գործիչների:

Վերջինները, ըստ իս, թույլ են տալիս նաեւ մեկ այլ սխալ՝ ցեղասպանության բանաձեւի ընդունման ողջ գործը «դաշնակցության ծամփով» վերագրել հայկական ջանքերին: Ո՞ւր էր, թե դա ճիշտ լիներ: Ներկոնգրեսական եւ ներամերիկյան ներկա խաղի կանոնների տերը մենք չենք, դժբախտաբար: Անշուշտ, անուրանալի է հայկական լոբբիինգի դերը, սակայն իրավիճակի տերը մենք չենք, ամենեւին: Եվ դա, վստահ եմ, առավել տեսանելի կլինի հետագա օրերին:

ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչները թույլ են տալիս եւս մեկ, շատ ավելի ծանրակշիռ սխալ, երբ ընդունում են, որ իրենք, կամ գլխավորաբար իրենք են տանում Հայ դատի, այս դեպքում՝ թիվ 398 բանաձեւի հետապնդման աշխատանքները: Դրանով նրանք, փաստորեն, կրկնում են, պաշտոնական թե անպաշտոն Թուրքիայի պնդումները, թե հայկական պահանջատիրությունը ոչ թե բոլոր հայերի, այլ ընդամենը դաշնակների ձգտումն է, որ եթե Ռոբերտ Քոչարյանը ՄԱԿ-ի ամբիոնից Հայոց ցեղասպանության հարց է բարձրացնում, արդա ... դաշնակ է, եւ որ Դաշնակցությունն է միայն դեմ հայ-թուրք հարաբերությունների բնականոնացմանը (անշուշտ, այս վերջին բառի տակ հասկանալով միայն իրենց՝ թուրքերի մտքում եղածը):

Ուրեմն, հոետորական մի հարց՝ ճի՞շտ են թուրքերի այս եւ նման պնդումները:

Հ. Ա.

ԱՐԱԲ-ԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Վճռորոշ գագաթաժողով Եգիպտոսում

ԱՆԴՐԱՆԻԿ ՄՈՎՍԵՍՅԱՆ

Կարծես թե միջազգային եռանդուն ջանքերը տվեցին առաջին պտուղները պաղեստինա-իսրայելական 16 օր տեւած առճակատումները մեղմելու գործում: Պաղեստինյան հողերում հարաբերական անդորր տիրեց հոկտեմբերի 14-ից, երբ հաստատվում էր, թե հոկտեմբերի 16-ին Եգիպտական Շարմ Շեյխ քաղաքում տեղի կունենա միջազգային գագաթաժողով՝ նվիրված վերոհիշյալ հակամարտությանը: Արդ հաստատվեց նաեւ մասնակիցների կազմը՝ ԱՄՆ նախագահ Բ. Քլինթոն, ՄԱԿ գլխավոր քարտուղար Կ. Անան, Եվրամիության արտաքին կապերի պատասխանատու Խ. Սոլանա, Եգիպտոսի նախագահ Հ. Մուբարաք, Հորդանանի թագավոր Աբդուլլա 2-րդ, պաղեստինյան առաջնորդ Յ. Արաֆաթ եւ Իսրայելի վարչապետ Է. Բարաք:

Չնայած Շարմ Շեյխի հանդիպումը նախատեսված էր դեռեւս հոկտեմբերի 5-ին, բայց եւ այնպես դրա կայացումը գրեթե անխուսափելի դարձավ միայն հոկտեմբերի 12-ից հետո: Այդ օրը տեղի ունեցան 3 վճռական որոշումներ, որոնք ցնցեցին ոչ միայն Վաշինգտոնը, այլեւ աշխարհի բոլոր շահագրգիռ մայրաքաղաքները: Առաջին նոր որակ ստացավ պաղեստինցիների դեմ սանձազերծված իսրայելական բանակի ագրեսիան, երբ օդուժը հրթիռակոծեց պաղեստինյան մի շարք վարչական, անվտանգության եւ տնտեսական կենտրոններ: Այս իրողությունը, ԱՄՆ-ի ճնշման ներքո, Հոսնի Մուբարաքին ստիպեց հրաժարվել հոկտեմբերի 11-ին հայտարարած խիստ նախապայմաններից՝ նշյալ հանդիպումը հյուրընկալելու համար, եւ բավարարվել լոկ մի պայմանով՝ դադարեցնել բռնությունը պաղեստինցիների դեմ:

Տես էջ 8

Խորհրդական Բերգերը եւ Մադլեն Օլբրայթը Քլինթոնին ճանապարհեցին Եգիպտոս

Թուրքերի ցույց Բեռլինում

ԲԵՌԼԻՆ, 16 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՍՆՍՐՔ: Անցած կիրակի Գերմանիայի մայրաքաղաքում ցույցի էր հավաքվել շուրջ երեք հազար թուրք՝ ի նշան բողոքի XX դարի սկզբին Օսմանյան Թուրքիայում իրագործված Հայոց ցեղասպանությունը ԱՄՆ Կոնգրեսի կողմից ճանաչելուն նպատակաուղղված նախաձեռնության դեմ: Ցուցարարները պահանջել են դադարեցնել Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ 596-րդ բանաձեւի քննարկումը ԱՄՆ Կոնգրեսում: Ցույցի ընթացքում հերթական անգամ հրապարակվել է պաշտոնական Անկարայի դիրքորոշումը, որի կարծիքով, «պատմությունը պետք է գնահատեն պատմաբանները, այլ ոչ թե երրորդ երկրի քաղաքական գործիչները»:

Սակայն, տեղի դիտորդների կարծիքով, կարելի է խոսել Բեռլինում կազմակերպված բողոքի ցույցի ծախսման մասին: Այսպես, գերմանական DPA լրատվական գործակալության հաղորդման համաձայն, ցույցի կազմակերպիչները մտադիր էին բազմահազարանոց բողոքի ցույց գործողություն անցկացնել Բեռլինում՝ Գերմանիայի բոլոր մասերում բնակվող թուրքերի մասնակցությամբ: Սակայն, հակառակ նրանց կանխատեսումների, ցույցի դուրս եկավ 3 հազարից էլ պակաս թուրք:

Նշենք, որ 598-րդ բանաձեւի քննարկումը Կոնգրեսում կարող է տեղի ունենալ արդեն այս շաբաթ:

«ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27»

Հիշեցում

ԵՐԵՎԱՆ, 16 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՍՆՍՐՔ: 15 օրվա ընթացքում 1999 թվականի հոկտեմբերի 27-ին Հայաստանի խորհրդարանում տեղի ունեցած ահաբեկչության գործով տուժածների շահերը ներկայացնող փաստաբանների խումբը կավարտի քննության նյութերի 40 հատորներին ծանոթանալու գործընթացը: Այդ մասին հաղորդեց փաստաբան Մարինա Հալաբյանը, որը պաշտպանում է նախկին վարչապետ Արամ Սարգսյանի շահերը:

Հալաբյանը չի բացառում, որ մինչեւ նոյեմբերի վերջը քննության նյութերն ուղարկվեն դատարան: Ի դեպ, իրենց շահերի պաշտպանության շուրջ պայմանագրեր են ստորագրել նաեւ խորհրդարանի զոհված փոխխոսնակներ Յուրի Բախչյանի եւ Ռուբեն Միրոյանի տիկնայք Անահիտ Բախչյանն ու Արծվին Միրոյանը:

Ինչպես ՍՆՍՐՔ-ի թղթակցի հետ զրույցում հաղորդեց Հայաստանի զինվորական դատախազության քննչական վարչության ղեկավար Արսակ Հարությունյանը, մեղադրյալների փաստաբաններն ու մեղադրյալներն իրենք նույնպես ծանոթանում են քննության նյութերին:

Հիշեցնենք, որ հոկտեմբերի 27-ի գործով մեղադրվում է 13 մարդ, որոնց թվում ահաբեկչական խմբի պարագլուխ Նաիրի Հունանյանը, նրա եղբայր Կարենը, Վռամ Գալստյանը, Էդուարդ Գրիգորյանը, Դերենիկ Բեջանյանը եւ ուրիշներ: Մեղադրյալներից մեկը՝ Նորայր Եղիազարյանը, օգոստոսին մահացավ քննչական մեկուսարանում:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Վելայաթ Գուլիեւին Մոսկվան ընդունեց ամենաբարձր մակարդակով

Օրակարգում՝ Ղարաբաղի հարց, Կասպիցի կարգավիճակ, երկկողմ հարաբերություններ

Այսօր ավարտվում է Ադրբեջանի արտգործնախարար Վելայաթ Գուլիեւի եռօրյա պաշտոնական այցը Մոսկվա: Գուլիեւը Ռուսաստանի բարձրաստիճան պաշտոնյաների հետ քննարկելու էր Լեռնային Ղարաբաղի հարցը՝ վկայակոչելով ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը հաղորդում է ԻՌՆԱ գործակալությունը: Ադրբեջանի արտաքին գերատեսչության ղեկավարը հանդիպել է ՌԴ փոխվարչապետ Վիկտոր Խրիստենկոյին, խորհրդարանի Վերին ու Ստորին պալատների խոսնակներ Եգոր Ստրոեւին եւ Գենադի Սելեզնյովին, արտգործնախարար Իգոր Իվանովին, ՌԴ ազգությունների գծով նախարար Ալեքսանդր Բլոխինին, որը եղել է Ադրբեջանում ՌԴ դեսպան, Մոսկվայի քաղաքագլուխ Յուրի Լուժկովին, ԵԱՀԿ Մինսկի խմբի ռուսաստանյան համանախագահ Նիկոլայ Գրիբկովին:

Քննարկվել են Լեռնային Ղարաբաղի հարցը, Կասպիցի կարգավիճակը եւ էներգակիրների տեղափոխման ուղիները, Ադրբեջանի եւ Ռուսաստանի տնտեսական, առեւտրային հարաբերությունները, երկու երկրների միջեւ ազատ առեւտրի գոտու ստեղծման խնդիրը: Առանձնակի ուշադրության է արժանացել երկու երկրների համատեղ պայքարն անջատողականության, միջազգային ահաբեկչության, թմրաքերների տարածման դեմ:

Վելայաթ Գուլիեւի մոսկովյան այցի, հանդիպումների մասին այլ մանրամասներ չեն հաղորդվում:

Ավելացնենք, որ երկու երկրների շուրջ 10-ամյա հարաբերություններում սա առաջին դեպքն է, երբ Ադրբեջանի արտգործնախարարը պաշտոնական այցով ժամանում է Մոսկվա:

Ռ. Հ.

ԵԱՀԿ-ը չի ճանաչում Բելառուսի ընտրությունների արդյունքները

ՄԻՆՍԿ, 16 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊԱՆ: Հոկտեմբերի 15-ին Բելառուսում կայացել են խորհրդարանական ընտրություններ, որոնց չեն մասնակցել որոշ ընդդիմադիր ուժեր: Ինչպես հաղորդել են հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովից, ընտրողների ակտիվությունը անցել է 60%-ից: Միեւնույն ժամանակ Մինսկում եվրոպայի անվտանգության եւ համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) առաքելության ներկայացուցիչները հոկտեմբերի 16-ին հայտարարել են, որ խորհրդարանական ընտրությունները Բելոռուսիայում չէին համապատասխանում ժողովրդավարական նորմերին եւ չեն կարող ճանաչված լինել: Հայտարարության մեջ, որ տարածել է առաքելությունը, ասվում է, որ չեն պահպանվել «ազատ, արդար, հավասար, հաշվետվության ենթակա եւ բաց ընտրությունների» անցկացման նվազագույն պահանջները:



ԱԶԳ

ՈՒՇԱԳԻՐ

Նարկոլոգիական կենտրոնի տվյալները չեն արտացոլում թմրամոլության իրական վիճակը

Ամենահամեստ գնահատականների համաձայն, Հայաստանում թմրամոլությամբ տառապող հիվանդների իրական թիվն անցնում է 7 հազարից, մինչդեռ Հայաստանի նարկոլոգիական հանրապետական կենտրոնում հաշվառման է կանգնած այդախտորոշմամբ ընդամենը 295 մարդ: Այդ մասին ՄՆԱՐՔ-ի թղթակցի հետ զրուցելիս հաղորդեց կենտրոնի փոխտնօրեն, հանրապետության գլխավոր նարկոլոգ Սեդա Ջամալյանը:

Մասնագետի ասելով, Հայաստանն, ըստ էության,,հաշիշային,, երկիր է, քանի որ հանրապետությունում եւ այլ երկրներում: Եւ, այնուամենայնիվ, Սեդա Ջամալյանը կարծում է, որ Հայաստանում դիտվում է թմրամոլների «երիտասարդացման» միտում: «Երիտասարդությունը դարձել է թմրանյութերի հիմնական օգտագործողը, իսկ թմրամոլների միջին հասակն իջել է 35-ից մինչեւ 25 տարեկան: Հայաստանում եղակի են հաշվառման կանգնած կին թմրամոլները», ասաց նա: Որոշ այլ տվյալների համաձայն, Հայաստանի մարմնավաճառների մեկ երրորդը թմրամոլներ են:

Սեդա Ջամալյանը նաեւ հաղորդեց, որ Հանրապետական նարկոլոգիական կենտրոնում դեռահասներ գրանցված չեն, սակայն հետազոտությունների տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ «թմրամոլ» ախտորոշմամբ հաշվառման վերցված յուրաքանչյուր երրորդ հիվանդ թմրանյութեր է օգտագործել արդեն պատանի հասակում:

Ջամալյանի կարծիքով, տագնապ է հարուցում նաեւ այն փաստը, որ թմրանյութերի ոչ բուժական օգտագործումը ՊԱՎ-ի տարածման բարձր աճի գործոն է: Հայաստանում, ի տարբերություն համաշխարհային 50-55 տոկոս միջին ցուցանիշի, այսօրվա դրությամբ ՍՊԻԴ-ով հիվանդների ընդամենը 20 տոկոսն է տառապում թմրամոլությամբ, սակայն դա չի նշանակում, թե երկիրը զերծ է այդ խնդրից:

Սեդա Ջամալյանը կարծում է, որ թմրամոլությամբ տառապող հիվանդների բժիշկներին դիմելուց խուսափելու պատճառներից մեկը իրավական հիմքի անկատարությունն է եւ, հատկապես, ՀՀ Քրեական օրենսգիրքը, որը քրեական պատասխանատվություն է նախատեսում թմրանյութեր օգտագործելու համար: Դրա հետեւանքով, այսօրվա դրությամբ Հայաստանի հանրապետական նարկոլոգիական կենտրոնում սպացիոնար բուժման մեջ գտնվող ոչ մի հիվանդ չկա, նշեց Ջամալյանը:

Նրա կարծիքով, եւս մեկ խնդիր է թմրամոլության դեմ պայքարի ազգային ծրագրի բացակայությունը: <Հարկավոր է կառավարությանն առընթեր գործում մի մարմին, որը պետք է օժտված լինի թմրամոլության բնագավառի հաղթականություն մտցնելու լիազորություններով եւ համակարգի շահագրգիռ գերատեսչությունների գործողությունները»: Նա հաղորդեց, որ մեկ թմրամոլի բուժումը պետության վրա նստում է միջին հաշվով 250 դոլար: Հանրապետության գլխավոր նարկոլոգի կարծիքով, այդ գումարը միանգամայն բավարար է՝ սակայն միջոցները ժամանակին տրամադրելու պայմանով:

ՍՆՍՐՔ

ԵԿԵՂԵՑԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

Նորակառույց եկեղեցու օծում Մալիշկա գյուղում

Քրիստոնեության պետականորեն ընդունման 1700-ամյակի առիթով հայաստանյան հավատացյալ ժողովրդի հոգեւոր կյանքի աշխուժացմանը նպաստում է նաեւ հանրապետությունում եկեղեցաշինության վերելքը:

Նոյեմբերի 3-5-ը տեղի կունենան հոգեւոր-մշակութային բնույթի մի շարք միջոցառումներ՝ Վայքի մարզի Մալիշկա գյուղի նորակառույց եկեղեցու նավակատիքի արարողության առիթով՝ ի վկայություն հայ-ռուսական վաղեմի բարեկամության եւ հետագա ամրապնդման: Միջոցառման կազմակերպիչները՝ «Ռուսաստանի հայերի միության» անդամները, նախագահ Արա Աբրահամյանը եւ մյուս մասնակիցները Մոսկվայից երեւան կժամանեն նոյեմբերի 3-ին: Հյուրերը հանդիպումներ կունենան հանրապետության կառավարության անդամների, ՀՀ նախագահի հետ:

Կկազմակերպվեն էքսկուրսիաներ՝ Հայաստանի պատմամշակութային եւ տեսարժան վայրեր, այցելություն էջմիածնի Մայր տաճար, Սրբ. Հռիփսիմե եկեղեցի, Նորավանք, Գառնի, Գեղարդ, Գլաձորի համալսարան, Սեւանա լիճ, Ծիծեռնակաբերդի հուշահամալիր:

Նորակառույց եկեղեցու բացման եւ օծման արարողությունը տեղի կունենա նոյեմբերի 4-ին, ժամը 11-ին, Մալիշկա գյուղում:



ՎԵՐՔԱԲԵՐԻՉ

Արմեն Տեր-Սահակյանն իր հերթին մեղադրում է Վահան Հարությունյանին եւ Արծրուն Մարգարյանին

ԵՐԵՎԱՆ, 16 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Քրեական եւ զինվորական գործերով վերաքննիչ դատարանի հոկտեմբերի 16-ի նիստում շարունակվեց Արմեն Տեր-Սահակյանի եւ մյուսների վերաքննիչ բողոքներով դատաքննությունը:

Ամբաստանյալ Իսրայել Սարգսյանն իր դժգոհությունը հայտնեց առաջին ատյանի դատարանի վճռից, որով դատապարտվել է 9 տարվա ազատազրկման, այդ թվում 2-ը՝ բանտային ռեժիմով: Նա սխալ համարեց ՆԳՆ համակարգում օրինական ճանապարհով ընդգրկված ջոկատը բանդա որակելը: Ըստ նրա, ջոկատը կազմավորվել է պետական օբյեկտները եւ պաշտոնատար անձանց պահպանելու, պատերազմական գոտում հետախուզական աշխատանք կատարելու, պետությանը ծառայելու համար, ինչը սակայն չի հաստատել կատարել: Օրինական կառույցին, ինչպես նշեց ամբաստանյալը, ներքին զորքերի վարչությունում որեւէ սենյակ չէր հատկացվել. սկզբնական շրջանում ջոկատը հավաքվում էր ՀՀՇ շենքում, ապա ՆԶՎ բակում: Անբաստանյալը ջոկատի օրինականությունն ընդգծելու համար հիշատակեց այն փաստը, որ իրեն կառույցում ընդգրկելու հրամանը տվել է ՆԳ նախարար Վանո Սիրադեղյանի կողմից:

Թեեւ անբաստանյալը նշեց, որ մասնակիորեն իրենց մեղավոր է ճանաչում, սակայն փաստորեն հերքեց բոլոր մեղադրանքները: Նա պնդեց, թե որեւէ առնչություն չի ունեցել Աշտարակի շրջգործկոմի նախագահ Հովհաննես Սուքիասյանի սպանությանը, ավազակային հարձակումներին, իսկ ՀՀ դատախազության քննչական վարչության պետ Վլադիմիր Գրիգորյանի սպանությունը խափանվել է, որովհետեւ իրենք չեն ցանկացել նրան սպանել: Վ. Գրիգորյանի մեքենայի վրա արձակված 74 գնդակները, ըստ նրա, նոյնպես ունեին սպանության պատվիրատուին կամ պատվիրատուներին ցույց տալ, որ «մենք ցանկացել ենք սպանել Գրիգորյանին»: Տեր-Սահակյանն իր հերթին հայտարարեց, որ ջոկատի անդամները հաշվեցուցակային զենք, վկայականներ ստացել են այն ժամանակ ՆԶՎ հրամանատար Վահան Հարությունյանից, սպանությունների հրամաններ տվել են Արծրուն Մարգարյանի կողմից, իսկ Վահան Հարությունյանը տեղյակ է եղել դրանց: Այդուհանդերձ, Արմեն Տեր-Սահակյանը տարակուսանք հայտնեց, որ բանդիտիզմի մեղադրանք իրենց ներկայացվել է, իսկ Վահան Հարությունյանին՝ ոչ:

ԼՐԱՏՈՒՏԻՉ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պատգամավորներ՝ նախնական տվյալներով

ԵՐԵՎԱՆ, 16 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ըստ նախնական տվյալների, հոկտեմբերի 15-ին անցկացված ԱԺ պատգամավորների լրացուցիչ ընտրություններում Երեւանի թիվ 9 ընտրատարածքում հաղթել է անկուսակցական, «Երեւանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ էրեբունու մասնաճյուղի փոխտնօրեն Գրիգոր Մաղաքյանը, Երեւանի թիվ 10 ընտրատարածքում՝ ՀՀԿ անդամ, «Երեւանի համակցված կերեր» ԲԲԸ խորհրդի նախագահ Գեւորգ Հակոբյանը, Արարատի թիվ 29 ընտրատարածքում՝ անկուսակցական, «Հայագրոբանկ» ԲԲԸ խորհրդի նախագահ եւ «Արտոյլ» ՀՁ ՓԲԸ խորհրդի նախագահ Գուրգեն Արսենյանը, Կոտայքի մարզի թիվ 55 ընտրատարածքում անկուսակցական Մուշեղ Հարությունյանը, որը մինչ առաջադրվելը Հրազդանի ՆԳ բաժնի ավագ քննիչ էր:

Քվեարկության ավարտից ոչ ուշ, քան 22 ժամվա ընթացքում մինչեւ հոկտեմբերի 16-ի ժամը 18:00-ը, Երեւանի, Արարատի եւ Կոտայքի մարզային ընտրական հանձնաժողովները պետք է պաշտոնապես հրապարակեն նախնական տվյալները:

Ինչպես «Նոյյան տապանի» թղթակցին տեղեկացրեց Երեւանի քաղաքային ընտրական հանձնաժողովի քարտուղար Անահիտ Բալասանյանը, թիվ 9 ընտրատարածքի 29440 ընտրողներից քվեարկությանը մասնակցել է 7988 մարդ (27,1 տոկոս): Գրիգոր Մաղաքյանի օգտին քվեարկել է 5599 ընտրող, Արմեն Դանիելյանի օգտին 1946: 179 ընտրող դեմ է քվեարկել երկու թեկնածուներին: Անվավեր է ճանաչվել 262 քվեաթերթիկ: Անճշտությունների թիվը 4 է:

Թիվ 10 ընտրատարածքի 30576 ընտրողներից քվեարկությանը մասնակցել է 17363-ը (56,8 տոկոս): Միակ թեկնածու Գեւորգ Հակոբյանի օգտին քվեարկել է 17088 ընտրող, դեմ՝ 117-ը: Անվավեր է ճանաչվել 133 քվեաթերթիկ: Անճշտությունների թիվը՝ 0:

ԿԸՀ քարտուղար Արմենուհի Զոհրաբյանից տեղեկացանք, որ ըստ նախնական տվյալների, Կոտայքի թիվ 55 ընտրատարածքի 27015 ընտրողներից քվեարկությանը մասնակցել է 11222 ընտրող: Արամ Դանիելյանի օգտին քվեարկել է 5012 ընտրող, Մուշեղ Հարությունյանի օգտին՝ 5579: Երկու թեկնածուներին դեմ է քվեարկել 102 ընտրող: Անվավեր է ճանաչվել 526 քվեաթերթիկ: Անճշտությունների թիվը՝ 8:

Արարատի մարզի թիվ 29 ընտրատարածքում 27058 ընտրողներից քվեարկությանը մասնակցել է 15288-ը: Միհրան Մովսիսյանի օգտին քվեարկել է 2588 ընտրող, Անուշավան Զաքարյանի օգտին՝ 90 ընտրող, Հրայր Թովմասյանի օգտին՝ 2383, Գուրգեն Արսենյանի օգտին՝ 6311, Սարգիս Ավագյանի օգտին՝ 2625 ընտրող: 5 թեկնածուներին դեմ է քվեարկել 93 ընտրող: Անվավեր է ճանաչվել 1220 քվեաթերթիկ: Անճշտությունների թիվը՝ 50:

Միջազգային դոնորները Երեւանում

ԵՐԵՎԱՆ, 16 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հոկտեմբերի 19-ին Երեւանում կկայանա միջազգային դոնորների կոնսուլտացիոն հանդիպում Հայաստանի կառավարական, գործարար եւ հասարակական շրջանների հետ: Հանդիպումը կազմակերպել է Համաշխարհային բանկը: Այն առաջին անգամ կկայանա Երեւանում. նախորդ նման հանդիպումները տեղի են ունեցել Փարիզում: Ինչպես նշեց Հայաստանում ՀԲ ներկայացուցիչ Օուեյս Սաադաքը, հանդիպումը Հայաստանում է անցկացվում, որպեսզի «դոնորները իրենց աչքերով տեսնեն այս երկրի հնարավորությունները» եւ գնահատեն ներդրումների հեռանկարները: Միջազգային դոնորների թվում են Համաշխարհային բանկի, Միջազգային արժութային հիմնադրամի, Եվրամիության, Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության, ՄԱԿ Զարգացման ծրագրի, ինչպես նաեւ Ճապոնիայի, Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Շվեյցարիայի, Ռուսաստանի, Չինաստանի եւ այլ երկրների ներկայացուցիչներ: Հանդիպումը կտեւի երկու օր:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 8 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
ֆաքս 562863, AT&T (3742) 151065,
e-mail: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ՀՐԱՅՐ ՁՈՐԵԱՆ / հեռ. 529353
Համակարգչային ծառայություն / 562941
Apple Macintosh
համակարգչային շարուածը «Ազգ» թերթի
Յղումը «Ազգին» պարտադիր է
Նյութերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

ՈՍԿԵՓԱԿ

ԱՅՍՏԱԳՐԱԿԱՆ

Նշվեց Զեյթունի ապստամբության 105-րդ տարեդարձը

«Զեյթուն» հայրենակցական, բարեգործական, մշակութային միության նախաձեռնությամբ հոկտեմբերի 15-ին կայացավ Զեյթունի 1895 թ. ծակատամարտի 105-րդ տարեդարձի տոնակատարությունը: Նիստին, որը բացվեց Գառնիկ քահանա Կարապետյանի օրհնությամբ, ներկա էին Երեւանի քաղաքապետ Ա. Բազեյանը, Քանաքեռ-Զեյթուն համայնքի քաղաքապետ Սինոյանը, հայրենակցական միությունների նախագահներ, գիտության եւ մշակույթի գործիչներ:

105 տարի առաջ, հոկտեմբերի 15-ին սկսվեց Զեյթունի ապստամբությունը: 110 հազարանոց կառավարական զորք եւ խաժամուժ հարձակվեց Զեյթունի վրա, զեյթունցիները ընդամենը 6 հազար մարդով դիմակայեցին շուրջ 2 եւ ավելի ամիս: Զեյթունցի մարտիկներից զոհվեցին 250 մարդ, բշնամին կորցրեց բազմաթիվ զինվոր:

Դեռեւս 1894 թ. մեծ զոհեր տալով ընկավ Սասունը, որի անկումն ավելի զգաստացրեց զեյթունցիներին, որոնք ավելի կազմակերպված հանդես եկան: Նրանց հաջողվեց զինաթափել հարեւան թուրքական եւ իսլամական գյուղերը: Պատերազմում մեծ դեր ունեցավ նաեւ զեյթունցի կինը: Ա. Բազեյանն իր ելույթում նշեց, որ Զեյթունը նույն դերն էր կատարում Կիլիկիայում, ինչ Շուշին՝ Արցախում:

Նիստում որոշվեց այսուհետ նոր հիմքի վրա դնել զեյթունագիտությունը, Զեյթունի պատմության ու իրադարձությունների կապակցությամբ ՀՀ ԳԱԱ-ում կազմակերպել գիտաժողով:

«Զեյթունի 1895 թ. ապստամբությունը հայ ազատագրական շարժման դափնեպսակն է: Այստեղ ոչ միայն արձանագրվեց բարոյական հաղթանակ, այլեւ ռազմի դաշտում երեւաց զեյթունցի զինվորի ուժն ու կարողությունը: Դա ժողովրդական պոռթկում էր, ահա թե ինչու ենք 1895 թ.-ի թե հերոսամարտը եւ թե մասնակիցներին փառքով հիշում ու մեծարում», իր զեկույցում ասաց քաղաքապետ Սինոյանը:

Այնուհետեւ որոշվեց Զեյթուն քաղաքի մի քանի փողոց եւ ուսումնական հաստատություն ելս վերանվանել զեյթունցի երեւելիների անուններով: Գեղարվեստական մասով հանդես եկան «Զեյթուն» մանկապարտեզի սաները:

Ն. Ս.

«Ազգի» սեպտեմբերի 13-ի համարում տեղեկատվություն էինք հրապարակել, որ «Գյումրի-տեխտիլ» ՓԲԸ-ից (տնօրեն՝ Հունան Ավետիսյան) ապօրինաբար հաստոցներ են վաճառվում: Հիշեցնենք, որ այս ձեռնարկությունում մոտ 1 մլն դոլար ներդրումներ կատարելու եւ արտադրությունը վերագործարկելու բիզնես-ծրագիր էր ներկայացրել թուրքական «Նեստեխ-տեխտիլ» ընկերությունը: Հրապարակումը չհերքեցին ոչ Գյումրու ձեռնարկության ղեկավարները, ոչ ՀՀ արդյունաբերության եւ առեւտրի նախարարությունը: Այդուհանդերձ, պաշտոնական պատասխան ստանալու նպատակով դիմեցինք վերոհիշյալ նախարարության թեթեւ արդյունաբերության վարչության պետ Մեռուժան Հակոբյանին: Վերջինս հայտնեց, որ «Գյումրի-տեխտիլը» սնանկ ձեռնարկություն է ճանաչվել 1997 թ. եւ այժմ լուծարվում է: Հաստոցները վաճառելու մասին մեր հարցին պրն Հակոբյանը պատասխանեց. «Մենք խնդրել ենք, որ թուրքական ընկերության հետ ներդրումային ծրագրի մշակման ընթացքում որեւէ մեքենասարքավորում չվաճառվի: Վերջին մի քանի ամիսներին ոչ մի իրացում չի կատարվել: Ինչ եղել է, մինչ այդ է եղել, եւ նախարարության հետ չի համաձայնեցվել»: Վերջին մտքի վերաբերյալ թեթեւ արդյունաբերության վարչության պետը պարզաբանեց, որ պետական ձեռնարկությունից որեւէ սարքավորում վաճառելու համար տվյալ ընկերության բաժնետերերի խորհուրդը դիմում է նախարարին: Վերջինս այդ դիմումն ուղարկում է օտարման հանձնաժողով, որն էլ որոշում է

ԳՅՈՒՄՐԻ

Հաստոցներն այնուամենայնիվ վաճառվել են

ը: Հրապարակումը չհերքեցին ոչ Գյումրու ձեռնարկության ղեկավարները, ոչ ՀՀ արդյունաբերության եւ առեւտրի նախարարությունը: Այդուհանդերձ, պաշտոնական պատասխան ստանալու նպատակով դիմեցինք վերոհիշյալ նախարարության թեթեւ արդյունաբերության վարչության պետ Մեռուժան Հակոբյանին: Վերջինս հայտնեց, որ «Գյումրի-տեխտիլը» սնանկ ձեռնարկություն է ճանաչվել 1997 թ. եւ այժմ լուծարվում է: Հաստոցները վաճառելու մասին մեր հարցին պրն Հակոբյանը պատասխանեց. «Մենք խնդրել ենք, որ թուրքական ընկերության հետ ներդրումային ծրագրի մշակման ընթացքում որեւէ մեքենասարքավորում չվաճառվի: Վերջին մի քանի ամիսներին ոչ մի իրացում չի կատարվել: Ինչ եղել է, վաճառե՞լ, թե՞ ոչ: Այդպիսի դիմում, մինչ սնանկ ճանաչվելը (1997 թ.), «Գյումրի-տեխտիլը» չի ներկայացրել: 1997 թ.-ից հետո կատարված իրադարձությունների վերաբերյալ արդեն պատասխանատու է Շիրակի մարզային դատախազությունը:

Այդուհանդերձ, Մեռուժան Հակոբյանի պարզաբանումը չէր կարող պատասխանել բոլոր հարցերին: Այն է՝ ինչո՞ւ է այդքան երկարում լուծարման գործընթացը, ինչո՞ւ որեւէ արձագանք չի ստացվում «Գյումրի-տեխտիլից», ինչո՞ւ է թուրքական կողմը ելս համոզված, որ որոշ հաստոցներ վաճառվել են: Սրանք թերեւս այլ, ավելի բարձր աստիճանների եւ պաշտոնյաների պատասխանելիք հարցերն են, որոնք սակայն մնում են անպատասխան:

Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Այսօր Երեւանի որոշ թաղամասեր կմնան առանց ջրի

ԵՐԵՎԱՆ, 16 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՍՆՍՐՔ: Էլեկտրական ենթակայանի վերանորոգման պատճառով հոկտեմբերի 17-ին, օրվա երկրորդ կեսին, Նոր Նորքի 5-րդ եւ 8-րդ զանգվածները կջրազրկվեն ամբողջովին, իսկ 4-րդ եւ 6-րդ զանգվածները՝ մասամբ: Ինչպես ՍՆՍՐՔ գործակալությանը հաղորդեցին Երեւանի ջրմուղ կոյուղի կառավարող «Այ Յութիլիթի» ընկերությունից, այդ նույն օրն Արգնիի ջրատարի վթարի հետեւանքների վերացման հետ կապված զգալիորեն կնվազի ջրի մատակարարումն Արաբկիր թաղամասի սպառողներին: Քաղաքացիներից ներողություն ենք խնդրում պատճառվող անհանգստության համար:

ԿՈՏԱՅՔ

Ֆերմերները հանդես են գալիս նոր առաջարկներով

Շաբաթ օրը Կոտայքի մարզում կայացավ Ֆերմերների ազգային միության արտագնա նիստ, որի թեման հանրապետությունում սակավաջրության եւ տեւական երաշտի հետեւանքով ստեղծված իրավիճակի քննարկումն էր: Ի՞նչ միջոցներ ձեռնարկել, որպեսզի մեղմացվի երաշտի հարուցած վնասը ոչ միայն այս, այլեւ առաջիկա տարիներին: Հարցը բազմիցս բարձրացվել է ՖԱՄ-ի նիստերում, եւ առայժմ լուծման ուղիներ են փնտրվում: ՖԱՄ-ն այսօր իրազեկ է ոչ միայն հանրապետությանը, այլեւ միությանն անդամակցող 420 տնտեսվարող սուբյեկտներին հասցված վնասի մասին: Եվ եթե երաշտի ազդեցությունը տնտեսություններում կազմում է 50-60 տոկոս, ապա միությանն անդամակցողների մոտ 25-30 տոկոս է (իսկ որոշ հզոր տնտեսություններում՝ «Ծառուկյան Գ. Կ.», «Որդի Արմեն» ՍՊԸ եւ այլն, գրեթե չի ազդել): Եվ քանի որ եղանակային փոփոխությունները կարող են կրկնվել մի քանի տարին մեկ (բնությունն անապատացման եւ չորացման ուղղություն է վերցրել), միության նախագահության անդամ Արտաշես Զիրոյանն առաջարկեց դիմակայելու համար առաջին հերթին զարգացնել եւ հզորացնել ֆերմերային տնտեսությունները՝ կոոպերացման ճանապարհով: Կարեւորվեց նաեւ պետական աջակցության համակարգի գործունեության վերականգնումը, այդ նպատակով գյուղատնտեսության ոլորտում օրենսդրական դաշտի շուտափույթ հստակեցումը:

Անդրադառնալով ագրոբիզնեսի զարգացման նպատակով ՖԱՄ-ի կազմում վերջերս ձեւավորված մթերման ընկերակցության ծրագրերին, նշվեց, որ առաջիկայում կկազմակերպվի պանրատեսակների մեծաքանակ մթերում եւ պահում: Մոտ ապագայում կսկսվի նաեւ այլ գյուղմթերքների իրացումը: ՖԱՄ-ի գործադիր տնօրեն Ալբերտ Ղազարյանը տեղեկացրեց, որ մեծածախ առեւտրի կենտրոնը գործելու է Երեւանում, առկա է 100 տ տարողություն ունեցող պահեստային մաս, գործում են ժամանակակից սարքավորումներով հագեցած լաբորատորիա, սառնարանային տնտեսություն եւ այլն: Ընկերակցությունը կնպաստի նաեւ արտադրության մեջ նոր տեխնոլոգիաների ներդրմանը:

Անդրադառնալով գովազդի մասին օրենքին, ՖԱՄ-ի նախագահ Վանիկ Սողոմոնյանը նշեց, որ որոշ դեպքերում գովազդողը ապակողմնորոշում է սպառողին (գովազդում են միանգամայն ոչ գովելի ներմուծված սննդամթերք՝ դրանով հարվածելով տեղական արտադրությանը): «Երեւույթն անթույլատրելի է եւ պետք է անհապաղ կանխել, չպետք է անտեսել գովազդի մասին օրենքը», դիմեց նա զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներին:

ՆԵԼԼԻ ՍԱՀԱԿՅԱՆ

ԴՊՐՈՒԹՅՈՒՆ

Ակադեմիկոս Արարատ Ղարիբյանի անունը՝ Երեւանի թիվ 142 դպրոցին

Ականավոր գիտնական, լեզվաբան, բառարանագետ, Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Արարատ Ղարիբյանի (1899-1977) անունը հետայսու կրելու է Երեւանի թիվ 142 միջնակարգ դպրոցը: Անվանակոչումը համընկավ կրթօջախի հիմնադրման 30-ամյակին: Այդ երկու իրադարձություններին էր նվիրված ցերեկույթը, որին մասնակցելու էին եկել

Երեւանի քաղաքապետ Ալբերտ Բազեյանը, հասարակայնության ներկայացուցիչներ, մանկավարժներ, լեզվաբանի հարազատները, բարեկամները:

Տնօրեն Էթերի Խաչատյանը նշեց, որ 1970 թ. դպրոցն ուներ 244 աշակերտ ու 21 ուսուցիչ: Այսօր այստեղ 40 դասարանի 1008 աշակերտների դասավանդում է 82 մանկավարժ: Այս տարիներին դպրոցը տվել է 3400 շրջանավարտ, որոնք աշխատում են ամենատարբեր ոլորտներում: Նորարարությունն ու հաջողությունը հաջորդում են միմյանց, փաստեց դպրոցի տնօրենը, որն այդ պաշտոնը վարում է 20 տարի անընդմեջ: Կրթօջախը հպարտանում է իր ազատամարտիկ սաներով, որոնցից 7-ը չեն վերադարձել մարտի դաշտից: Նրանց հիշատակը ներկաները հարգեցին հոնկայտ՝ մեկ րոպե լռությամբ:

Քաղաքապետարանի ու երեւանցիների անունից շնորհավորելով հավաքվածներին, քաղաքապետ Ալբերտ Բազեյանը նշեց, որ նույնիսկ մերօրյա դժվարին ժամանակներում պետության ու հասարակության սրբազան պարտքն է ուշադրության կենտրոնում պահել դպրոցն ու կրթությունը: Նա երախտիքի խոսք ուղղեց բարերարներին, «բոլոր նրանց, ովքեր անտարբեր չեն դպրոցի, լուսավորության խնդիրների հանդեպ»: Ալբերտ Բազեյանը հայտնեց, որ իր ղեկավարած «Երեւան» հիմնադրամը պատրաստ է նյութապես օժանդակելու ծրագրին, որը կառաջարկի դպրոցը:

Ես այն մարդկանցից եմ, որ երկար տարիներ ճանաչել եմ Արարատ Ղարիբյանին, ասաց Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Գեւորգ Ջահուկյանը: Նա ամբողջությամբ նվիրված էր դպրոցին, նրա կազմած «Հայոց լեզվի քերականություն» դասագիրքը երկար տարիներ հայ դպրոցի անբաժան մասն էր: Մեծ ու մնայուն է Արարատ Ղարիբյանի ավանդը բառարանագրության մեջ. նրա գրչին է պատկանում ռուս-հայերեն սվարահատոր բառարանը, նրա ջանքերի շնորհիվ առաջացավ հայոց լեզվի հոգահատոր ակադեմիական բացատրական բառարանի կազմումը: Կյանքի վերջին տարիներին գիտնականը բեղմնավոր աշխատանք տարավ հայրենի բարբառների ուսումնասիրման ոլորտում: Քչերին է հայտնի, որ Արարատ Ղարիբյանը մասնակցել է 1918 թ. Սարդարապատի հերոսամարտին, քչերին է հայտնի, որ գիտնականի բանաստեղծական գրչին է պատկանում լայն ժողովրդականություն վայելող «Դու անմեղ ես, քո աչերն են մեղավոր» երգը, նշեց ակադեմիկոս Գեւորգ Ջահուկյանը:

Նոր Նորքի քաղաքապետ Մկրտիչ Մինասյանը հատկանշական համարեց, որ «այս անգամ պատեհապաշտական նկրտումներին տուրք չի տրվում», եւ դպրոցն անվանվում է մեծանուն գիտնականի, հմուտ մանկավարժի, մտավորականի անունով: Ցավոք, նրա դասագրքերը չկան դպրոցում, եւ դրանում մեղավոր են որոշ վայ-պաշտոնյաներ, չինովնիկներ, փաստեց քաղաքապետը: Վերջում Մկրտիչ Մինասյանը քաղաքապետարանի պատվոգիր հանձնեց դպրոցի տնօրենին:

Շնորհակալական խոսք ասաց գիտնականի դուստրը՝ Երեւանի Վ. Բրյուսովի անվան օտար լեզուների պետական ինստիտուտի դոցենտ Ջուլիետա Ղարիբյանը: Նա հուշեր պատմեց հոր մասին:

Ցերեկույթի մասնակիցներին դպրոցականներն անակնկալ էին պատրաստել՝ հրատարակելով «Արարատ» դպրոցական թերթի անդրանիկ համարը: Դա 9-ա դասարանի աշակերտների ու կիրառական տնտեսագիտության ուսուցչուհի Արմինե Ալեխանյանի՝ նախաձեռնությունն է, որը հնարավոր դարձավ «Պատանեկան նվաճումներ» կազմակերպության (տնօրեն՝ Արմինե Հովհաննիսյան) աջակցության շնորհիվ:

Դպրոցի ճեմասրահում բացվեց ցուցահանդես՝ նվիրված ակադեմիկոս Արարատ Ղարիբյանի կյանքին ու գործունեությանը:

ՏԻԳՐԱՆ ԼԻԼՈՅԱՆ

21-րդ դարը ալերգիայի դա՞ր

Առողջապահության միջազգային կազմակերպությունը 2000 թ. հոկտեմբերի 16-ը հայտարարել է ալերգիայի միջազգային օր

Քաղաքակրթության զարգացմանը զուգընթաց այսօր ողջ աշխարհում դիտվում է ալերգիկ հիվանդությունների բուռն աճ, որը պայմանավորված է նոր դեղամիջոցների հայտնագործմամբ, շինարարական նոր նյութերի ստեղծմամբ, սննդամթերքների բազմազանությամբ, շրջակա միջավայրի աղտոտմամբ, թունաքիմիկատների օգտագործմամբ եւ շատ հաճախ անհայտ պատճառներով: Քանի որ ալերգիկ ռեակցիաների հիմքում ընկած են իմունային մեխանիզմները, իմունային համակարգի շեղումներն էլ ավելի են մեծացնում ալերգիկ հիվանդությունների առաջացման հաճախականությունը եւ պատճառների բազմազանությունը: Ի վերջո, ալերգիան իմունային համակարգի ոչ համարժեք պատասխանն է, օրգանիզմի գերզգայնությունն է հանդեպ օտարածին ազդակի՝ սպեցիֆիկ ալերգենի նկատմամբ, հանգեցնելով ախտաբանական փոփոխությունների:

Ալերգիկ հիվանդությունների առաջացմանը նպաստում են նաեւ այլ օրգան-համակարգերի հիվանդությունները կամ թերֆունկցիան: Օրինակ, սննդային ալերգիան՝ մարսողական համակարգի հիվանդությունների, դեղորայքային ալերգիան՝ լյարդ-լեղապարկային համակարգի հիվանդությունների, որոշ ալերգոդերմատոզներ՝ նյարդային համակարգի, սթրեսոր ազդակների եւ այլն: Ընդհանրապես ալերգիկ ախտահարումները ընդգրկում են բոլոր օրգան-համակարգերը՝ մաշկը, աչքերը, շնչառական համակարգը, մարսողական, սիրտ-անոթային, միզասեռական, արյան համակարգերը: Առավել տարածված են բրոնխիալ ասթման, ալերգիկ ռինիտը, եղնջացանը, էկզեման, սննդային ալերգիան եւ այլն: Այսօր ալերգոլոգիան իմունոլոգիայի հետ, որպես գիտություն, բուռն զարգացում է ապրում: Կատարելագործվում են ախտորոշման եւ բուժման հարցերը: Ստեղծվում են նոր, արդյունավետ դեղամիջոցներ, փոխվում են հիվանդությունների դասակարգումները եւ նրանց զարգացման մեխանիզմների վերաբերյալ պատկերացումները:

Մեր հանրապետությունում գործում է կլինիկական իմունոլոգիայի եւ ալերգոլոգիայի հանրապետական կենտրոն, որտեղ ժամանակակից մակարդակով կազմակերպվում է ալերգիկ հիվանդություններով տառապող հիվանդների հետազոտումը եւ բուժումը:

Ս. ԳԱՍՊԱՐՈՎ
Կլինիկական իմունոլոգիայի եւ ալերգոլոգիայի ամբիոնի վարիչ

Արտաքին

Դուլիսին ռուսական «Ազգենսվո վոյեննիխ նովոստեյ» գործակալությունը, վկայակոչելով Ռուսաստանի գլխավոր շտաբի անանուն աղբյուրներ, հաղորդագրություն տարածեց, թե Վրաստանում տեղաբաշխված ռուսական ռազմակայանները դուրս կբերվեն եւ կտեղափոխվեն հարեւան հանրապետություն Հայաստան: Չեր նշվում՝ ռուսական ո՞ր ռազմակայանի մասին է խոսքը՝ Վազիանիի՞, Գուդաուտայի՞, Բաթումի՞, թե՞ Ախալքալաքի: Այն ժամանակ **«Ազգը»** փոքրիկ հոդված հրապարակեց նախ Հայաստանի արտգործնախարարությունից փորձեցին ճշտել՝ ինչքանո՞վ է լուրը համապատասխանում իրականությանը: Պատասխանեցին՝ ճիշտ հաստատով չեմ դիմել: Հայաստանի պաշտպանության նախարարությունից ասացին տեղեկություններ չունենք:

Հոկտեմբերի 6-ին «Ազատություն» ռադիոկայանի վրացական ծառայությունը, կրկին վկայակոչելով ռուսական աղբյուրներ, հաղորդեց, թե սեպտեմբերի 26-ին Սոսկվայում տեղի ունեցած Վլադիմիր Պուտին-Ռոբերտ Քոչարյան հանդիպման ժամանակ կողմերը համաձայնել են Ախալքալաքում տեղաբաշխված ռուսական 62-րդ դիվիզիան տեղակայել Հայաստանում: Անցած ուրբաթ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը հաղորդեց, որ Ախալքալաքում տեղակայված ռուսական ռազմակայանի զինտեխնիկայով բեռնված առաջին բեռնատարները հոկտեմբերի վերջերին կհասնեն Գյումրի: Կրկնում ենք՝ առաջին բեռնատարները: Ուրբաթ երեկոյան «Ազատություն» ռադիոկայանի հայկական ծառայությունը նշեց, թե 62-րդ դիվիզիայի Հայաստանի տարածք տեղափոխելու հարցը վճռվել է դեռ 1999 թ. նոյեմբերին ԵԱՀԿ Ստամբուլի գագաթաժողովի շրջանակներում: Ի դեմ, ստամբուլյան գագաթաժողովի շրջանակներում ձեռք բերված համաձայնությամբ, Վազիանիի (Թբիլիսիից ոչ հեռու) եւ Գուդաուտայի (Աբխազիա) ռուսական ռազմակայանները պետք է դուրս բերվեն մինչեւ 2001 թ. հուլիսի 1-ը, իսկ Բաթումինը (Աջարիա) եւ Ախալքալաքինը (Ջավախք)՝ մինչեւ 2003 թ. դեկտեմբերի 31-ը:

Ախալքալաքից 62-րդ դիվիզիայի դուրսբերման հարցը Ռուսաստանի եւ Վրաստանի ռազմական համաձայնության շրջանակներում է, Հայաստանը որեւէ ձեւով, որպես Վրաստանի ներքին խնդրի, չի կարող միջամտել: Սակայն այլ բան է Հայաստան, պատշտոնական Երեւան, բոլորովին այլ բան՝ հայություն, հայության անվտանգության երաշխիքներ: Ախալքալաքից ռուսական զորքերի դուրսբերումը կստիպի՝

Հայերին «փուլ առ փուլ» հեռանալ Ջավախքից

Նրանց մի մասն արդեն հեռացել է: Չկա աշխատանք, փող, լույս, հույս ու էլի ինչ-որ բան... չկա, չկա: Ջավախքում հայերը կազմում են ամբողջ բնակչության 95 տոկոսը՝ շուրջ 110-120 հազար: Ավելի ճիշտ, փաստաթղթերում այդպան է նշվում: Ինչպես ամբողջ Վրաստանում, այնպես էլ Ջավախքում 90-ական թթ.-ից լույս չկա: Հայերը չեն ուզում խավարի մեջ ապրել: Աշխատանք էլ չկա: Հայերն անգործ մնալ չեն կարող: Եթե նրանք բարձրաձայն բողոքում են իրենց թշվառ կյանքից, անմիջապես հետեւում է վրացիների պատասխանը՝ հայերն անջատողականներ են: Հիմա Ջավախքի հայ շատ օջախներում երեկոները լամպ կամ մոմ չի վառվում: Դուռը փակել, հեռացել են: 1993 թ. հայության խանգարն այստեղ կրկնակի կրճատվեց՝ այս անգամ վարչատարածքային նոր բաժանման պատճառով: 95 տոկոս հայությունն Ախալքալաքի, Բոգդանովկայի եւ Ասպինձայի շրջաններում էր: Նոր գծված քարտեզի վրա հիմա գրված է Սամցխե-Ջավախքիայի երկրամաս, որի մեջ մտնում են նախկինում Ախալքալաքի, Բոգդանովկայի (Նինոծմինդա), Ասպինձայի, Ախալցխայի, Բորժոմի եւ Ադիգենիի շրջանները: Վրացիները հպարտությամբ նշում են, որ Սամցխե-Ջավախքիան ինտերնացիոնալ շրջան է, որտեղ ապրում են 50 տոկոսը՝ վրացիներ, 40 տոկոսը՝ հայեր, մնացյալ 10 տոկոսը՝ ադրբեջանցիներ, հույներ, հրեաներ, ռուս դուխոբորներ, մեսխեթցի թուրքեր, այլ ազգություններ:

Վարչատարածքային նոր բաժանման պատճառով ջավախահայերը չեն հեռանա, բայց 62-րդ դիվիզիայի դուրսբերման պատճառով, տեղափոխվի Հայաստան թե Հնդկաստան, կհեռանան: Շուրջ 1000 ընտանիք եւս կմնա անգործ: 62-րդ դիվիզիայում են աշխատում շատ հայեր:

Ջավախահայերին անհանգստացնում է մեկ այլ բան: 1944 թ. նոյեմբերին Ստալինը 120 հազար մեսխեթցի թուրքերի արտաքսեց Կենտրոնական Ասիա՝ Ֆերգանայի հովիտ: Անցյալ տարի, երբ Վրաստանին ընդունում էին Եվրոպայի խորհուրդ (ԵԽ), առաջ քաշվեց կարեւոր նախադայման. առաջիկա 12 տարիներին այն մեսխեթցի թուրքերի համար, ովքեր ցանկանում են վերադառնալ մշտական բնակավայրեր՝ Սամցխե-Ջավախքիա, Թբիլիսին պարտավորվում է խոչընդոտներ չստեղծել: Կարեւոր չէ, մեսխեթցի թուրքերը ուզո՞ւմ են վերադառնալ, թե՞ ոչ: Կարեւորն այն է, որ ԵԽ-ն է ուզում, վերաբնակիչներին որպես նոպաս տրամադրում մի քանի հազար դոլար:

Ովքե՞ր են մեսխեթցի թուրքերը, ինչպե՞ս նրանց կընդունեն «տանտերերը», ի՞նչ ադագա է սպասում Սամցխե-Ջավախքիային, վիրահայությանը: Չեմ փորձի այս հարցերի պատասխանը տալ ոչ այն պատճառով, որ ինչ-ինչ տագնապներ են առաջացնում: Պատասխանը թող իմ վրացի գործընկերները տան: Հատկապես անցյալ տարի վրացական մամուլը հեղեղված էր մեսխեթցի թուրքերի մասին պատմող հոդվածներով: Սա դրանցից մեկը.

«Էրբաքանը փորձում էր ապացուցել, թե «Սամցխե-Ջավախքիան Թուրքիայի պատմական հողն է» («Ճանսի+» շաբաթաթերթ)

Նախագահ Շեւարդնաձեի հեռագա պատշտոնավարությունը կարող է հանգեցնել նրան, որ գալիք դարում Վրաստանը մնա առանց վրացիների: Աբխազիայում վրացի չես գտնի, գրեթե նույն պատկերն է Ցխինվալի շրջանում (Հարավային Օսիա-Թ. Հ.):

Շեւարդնաձեն համաձայնեց Վրաստանում վերաբնակեցնել Ֆերգանայի թուրք-մեսխեթցիների մի քանի տասնյակ հազարանոց հորդային: Մեր ղեկավարներին չի անհանգստացնում Սամցխե-Ջավախքիայում թուրքերին վերաբնակեցնելու վտանգը: Ջավախքի բնակչության մեծ մասը հայեր են, եւ բոլորիս է հայտնի հայ-թուրքական բենամությունը: Ինչո՞ւ ենք արհեստականորեն թեժ կետեր բորբոքում մասնատված, քայքայված Վրաստանում: Ենթադրենք, Ֆերգանայի թուրքերը ծագումնաբանորեն վրացիներ են (պատմաբանների մի մասը պնդում է, թե նրանք թուրքեր են, մի մասը՝ քրդեր, երրորդները՝ ադրբեջանցիներ, չորրորդ խումբը՝ մահմեդական վրացիներ. մի բան հաստատ է՝ մեսխեթցի թուրքերը սուննի մահմեդականներ են, որոնց մի հատված ընդունել է վահաբականություն- Թ. Հ): **Սակայն ինչո՞ւ անպայման բնակվեն Ջավախքիայում: Հաշվի առնվո՞ւմ է տեղի հայությունը կարծիքը:** Ջավախքցի վրաց բնակչությունը եւս դեմ է թուրք մեսխեթցիների վերադարձին:

Պատմական «արդարությունը» վերականգնելու ոգի տակ Թուրքիան նենգ նպատակներ է հետապնդում: Նույն ձեւով Թուրքիան ցանկանում է Ղրիմում վերաբնակեցնել արյունակից թաթարներին: **Բուլղարիայի՝ Թուրքիային սահմանակից տարածքներում բնակվում են մի քանի հարյուր հազար թուրքեր: 1991 թ. բուլղարացի թուրքերը փորձեցին հանրաքվեի միջոցով միանալ Թուրքիային: Նույնը չի՞ փորձի Թուրքիան Վրաստանի պարագայում, եթե թուրք-վրացական սահմանում մի քանի տասնյակ հազար մեսխեթցի թուրքերի վերաբնակեցումը իրականություն դառնա: Թուրքիան իր արյունակիցների շահերը պաշտպանելու պատրվակով չի՞ միջամտի Վրաստանի ներքին գործերին: Ժամանակին վարչապետ Էրբաքանը փորձում էր ապացուցել, թե Սամցխե-Ջավախքիան Թուրքիայի պատմական հողն է:**

Պանթուրքական ծրագրերից է Կարս-Ախալքալաք երկաթուղու շինարարությունը, որի իրականացման դեպքում Թուրքիան Ջավախքիայով, այնուհետեւ Ներքին Քարթլիով (Մառնեուլ, Ռուսթավ, Գարդաբանի, Ծիթելի-Ծկարո. այստեղ գերազանցապես ադրբեջանցիներ են ապրում-Թ. Հ.) **կկապվի Ադրբեջանին: Մի՞թե գործող հաղորդակցության միջոցները չեն բավարարում: Բաթումով եւ Վալեով անցնող երկաթգծերն աշխարհագրական առումով ավելի մոտ են Թուրքիային: Վրաստան-Թուրքիա ցամաքային կապն իրականացվում է հենց Բաթումով եւ Վալեով: Ո՞րն է Ախալքալաք-Կարս երկաթգծի կառուցման իմաստը:**

Այսօր Ջավախքիի հայությունը Հայաստանին միանալու ձգտում չունի, մինչդեռ մեսխեթցի թուրքերի վերաբնակեցումից հետո՝ հաշվի առնելով անվտանգությունը, նա կձգտի միանալ Հայաստանին: **Եթե ԵԽ-ն մեզանից պահանջում է 55 տարի առաջ բռնագաղթած թուրք մեսխեթցիներին ետ վերադարձնել, ապա թող սրիպի Ադրբեջանին, Ռուսաստանին, Հայաստանին եւ Թուրքիային՝ շուրջ 80 տարի առաջ՝ խորհրդային կարգերի հաստատման ժամանակաշրջանում այս երկրներին նվիրված վրաց հինավուրց հողերը ետ վերադարձնել:**

Ռուսաստանը Վրաստանի հետ այցագրային կարգ է մտցնելու

Այս մասին հոկտեմբերի 12-ին Թբիլիսիում հայտարարեց Վրաստանում ՌԴ նորանշանակ դեսպան Վլ. Գուդեւը: Չուշացավ պաշտոնական Թբիլիսիի պատասխանը, այդ դեպքում դժվարություններ կառաջանան Վրաստանում բնակվող ռուս բնակչության համար, ովքեր կցանկանան մեկնել Ռուսաստան: Իսկ հայե՞րը: Ջավախքում բնակվող հայերի մի մասը չի փոխել նախկին ԽՍՀՄ անձնագրերը: Վրաստանը թույլ կտա՞ իր երկրի քաղաքացիներ հայերին առանց այցագրի մեկնել Ռուսաստան: Իսկ ռուսական կողմնորոշում ունեցող Աջարիան եւ Թբիլիսիին չեն թարկվող Ասլան Աբաշիձեն ինչպե՞ս կընդունեն Վրաստանի կենտրոնական իշխանությունների վճիռը: Աղոտ է նաեւ դեռ ֆակտը Վրաստանից անկախ Աբխազիայի պարագան: Ուշագրավ է, որ Հարավային Օսիայի բնակչության մեծ մասն արդեն ընդունել է Ռուսաստանի քաղաքացիություն: Հարավային Օսիայի ղեկավարությունը բազմիցս դիմել է ՌԴ ԱԳՆ Ցխինվալիում ռուսական հյուպատոսություն բացելու խնդրանքով: Սա էլ հարցի լուծում չէ:

Ի՞նչ է սպասում Վրաստանին: Հարցին պատասխան կտա ժամանակը:

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ

Ռուսական զորքերը լքում են Ջավախքը, նրանց հետ՝ ջավախահայությունը

Եվրոպայի խորհուրդն այս կողմերում վերաբնակեցնում է սունի մահմեդականներին

«Այրուձին» կիսաքսահարի մոռացությունը

Հոկտեմբերի 8-ին «Այրուձի» մոլորակում տոն էր: 20 տարի անցավ այն օրից, երբ մի խումբ ուսանողներ ու դասախոսներ հիմնադրեցին «Այրուձի» արշավախումբը: «Մենք որոշեցինք ձիերով անցնել մեքենաների կողքից եւ մարդկանց ապացուցել, որ միայն մեքենայի շարժիչը չէ, որ ջերմություն է տալիս: Կան մոռացության մատնված կենդանիներ, որոնք հաճախ մեզ ավելի կջերմացնեն», ասաց «Այրուձի» հեծյալ ակումբի անդամ Արգուման Հարությունյանը: Ակումբի նպատակը ողջ Հայաստանով ձիերով շրջելն էր, հայկական երգն ու պարը, ազգային ձիախաղեր տարածելը, «սվերների թատրոնը» վերականգնելը:

«Սվերների թատրոնը», որ կոչվում է նաեւ գլխավոր հերոսի Ղարագյոզի անունով, հատուկ է աշխարհի գրեթե բոլոր ժողովուրդներին, ասաց ազգագրագետ Ժենյա Խաչատրյանը: Հերոսը մեծ քթով, ոչ բարեհամբույր արտաքինով, կոշտ ու կոպիտ վարքով տգամարդ ասպվածության կերպարն է: Ղարագյոզի թատրոնը հայերը ներկայացրել են տարբեր ծիսակատարությունների ժամանակ: Սակայն տարիների ընթացքում մոռացվել է: 1960-ականների սկզբին երկար փնտրտուքներից հետո Ախալքալաքում գտա Ղարագյոզ խաղացնող երեւի թե վերջին մոհիկանին: Նա ինձ փոխանցեց իր թե տիկնիկները, թե գիտելիքները»:

Հետո Ժենյա Խաչատրյանի ու այրուձիականների ջանքերով վերականգնվեց «սվերների թատրոնը»: Այրուձիականները ներկայացումներ էին ցուցադրում գրեթե բոլոր մեծ ու փոքր գյուղերում, ուր լինում էին: Պահպանում էին նաեւ թատրոնը գոնում ներկայացնելու ավանդույթը:

19-20-րդ դդ. թուրքերը փորձում են ապացուցել, թե Ղարագյոզի թատրոնը թուրքական ծագում ունի, սակայն հետազոտությունները ցույց են տալիս, որ հայկական երեւույթ է: Ավելին՝ կան փաստեր, որ Թուրքիայում Ղարագյոզի թատրոնում հայերն են խաղացել: Ժենյա Խաչատրյանը հույս հայտնեց, որ կգա ժամանակ, երբ աշխարհին կապացուցենք, որ

Ղարագյոզի թատրոնի հիմքում հայկական արմատներ են ընկած:

«Այրուձին» փորձում է հաղթել մոռացությանը: Սկզբնական շրջանում վաթսուն, իսկ այսօր ավելի շատ համախոհներ պահպանում ու շարունակում են ազգայինն ու ավանդականը: Այսօր «Այրուձիում» կա «Պատանեկան այրուձի»:

Քսան տարվա ընթացքում «Այրուձին» ձիերով շրջել է ողջ Հայաստանում: Այդ ընթացքում նրանք յուրաքանչյուր գյուղում ու քաղաքում ինչ-որ կայծ են թողել, որը հետագայում բռնկվել ու տարածվել է: Այսօր արդեն Աշտարակում նախատեսվում է իրականացնել ձիավազք: Առաջինն այս ամիս տեղի կունենա:

«Այրուձիի» անցած ճանապարհը միայն կանաչով պատված չի եղել: 1990-ականների սկզբին դժվարին պայմաններում ակումբը ձիեր է կորցրել, սակայն 1996-ից նրանց գլխաքանակը վեցից հասել է քսանի:

1996 թ.-ին «Այրուձիու» համար կարծես նոր կյանք սկսվեց: Աշտարակում տեղակայված բազայում սկսեց գործել ամառային ճամբար փախստական, ծնողազուրկ երեխաների համար: Ակումբը սկսեց զբաղվել նաեւ հիպոթերապիայով: Տոնակատարության ժամանակ «Այրուձիու» անդամները ձիախաղեր, ազգագրական երգ ու պար, սվերների թատրոն ներկայացրին: Մի շարք այրուձիականներ «Այրուձի» մոլորակի քաղաքացիության վկայագիր ստացան:

ԹԱՄԱՐ ՄԵԼԱՔՅԱՆ

ԱԶԳ

Միջազգային

«Ձեր արխիվները բաց չեն»

Նեստոր է թուրք լրագրող Մեհմետ Ալի Բիրանդը

Դատարան Թուրքիայի հոխորտանքներին, որ դատական արխիվները բաց են բոլորի առաջ, հայտնի հրադարակախոս, Թուրքիայի ամենաազդեցիկ թերթերի սյունակագիր եւ մի ժամանակ մեծ ժողովրդականություն վայելող «32-րդ օր» հեռուստածրագրի հեղինակ եւ վարող Մեհմետ Ալի Բիրանդը մտնում է, որ իրականում այդ արխիվները բաց չեն: Ինտերնետի միջոցով նա արտահայտել է իր կարծիքը, ասելով, որ այդ, արխիվային ֆոնդերը բաց են, եւ ցանկացած ոք կարող է ազատ մտնել, սակայն բարդությունները սկսվում են դրանից հետո:

«Վերաբերմունքը, որ դուք կստանաք, ամբողջովին կախված է ձեր ով, որտեղից եւ անցյալում ինչ հոդվածներ գրած լինելուց: Նախապատվությունը տրվում է այն մասնագետներին, որոնք պաշտպանում են թուրքական տեսակետները, կասկածյալները տորվում են բյուրոկրատական խոչընդոտների եւ քաղաքացիների բեռի ներքո: Նույնիսկ թուրքական գծի պաշտպանները կարող են հիասթափվել ամեն ինչից եւ ափսոսալ հանդիպելով քաղաքացիների: Ափսոսում ոչ ոք չի հավատում, որ թուրքական արխիվները իրականում բաց են, ինչպես թուրք պաշտոնական անձինք փորձում են հավատացնել», գրում է նա, ավելացնելով, որ CNN-ի «Սանսեթ» ծրագրով ելույթ ունեցողները՝ ամերիկացի Ջասթին Մկարթին, ֆրանսիացի էրիկ Ռուլոն, ինչպես նաեւ Սթենֆորդ Շոուն եւ Հիթ Լոուրին, նույն թուրքամետ կարծիքն են արտահայտել:

«Ինչո՞ւ: Ինչի՞ց եք վախենում: Ի՞նչ եք փորձում թաքցնել: Ինչո՞ւ եք ինքներդ ձեզ խաբում: Ինչո՞ւ եք խաբում ամբողջ աշխարհին», այս հարցերով է նա դիմում նրանց եւ բոլոր նրանց նմաններին: Ապա խորհուրդ տալիս. «Եկեք կամ փակ պահեք դռնք (արխիվները), կամ էլ ազնվորեն բացեք միջազգային օրենքներին համապատասխան: Չդիմեք արեւելյան խորամանկությունների»:

Պատճառաբանելով իր օգտագործած սուր տերմինները, նա այնուհետեւ գրում է. «Ես չեմ ցանկանում, որ մեր երեխաները կամ հաջորդ սերունդն ապրեն ամոթանքի մթնոլորտում: Մենք այնքան ծույլ ենք եղել, որ մինչեւ հիմա մեր անմեղությունն ապացուցելու նեղությունը չենք քաշել: Իսկ հիմա ուրիշներին ենք մեղադրում: Մեր ասածն ենք առաջ տանում, սպառնալով եւ բանտաժի ենթարկելով մեր մերձավորներին»:

Նշելով, որ տնտեսական շրջափակումներն ու պայմանագրերի չեղյալ հայտարարելն արդյունավետ միջոցներ չեն, Բիրանդն առաջարկում է համակերպվել խնդրի էության հետ, կամ թուրքմենական բնական գազը ներմուծել Իրանի վրայով, անտեսելով ամերիկյան առարկությունները, կամ էլ հայկական բանաձեւը պաշտպանող երկրների տենդերային ընկերություններից պահանջել, որ նրանց երկրները փոխեն դիրքորոշումը Հայաստանի նկատմամբ:

«Վերջում ցանկանում եմ երկու հարցի եւս անդրադառնալ, գրում է նա, առաջին՝ թուրքական մամուլը հետեւյալ խորագրերն է հրապարակում. «Մ. Նահանգների կառավարությունը պաշտպանում է հայկական բանաձեւը», «Մ. Նահանգները բարեկամաբար չի վարվում (մեզ հետ)», «Նույնիսկ Ֆրանսիան է մեզ ծախել», եւ այլն: Հասարակությունը մեղադրում է կառավարությանը: Սրանից հետո մամուլը պետք է ավելի շրջահայաց լինի եւ կարողանա տարբերակել կառավարություններին խորհրդարաններից: Նրանք հարցը չպետք է չափից ավելի սրեն: Երկրորդ՝ այս խոսակցությունը դեռ երկար է շարունակվելու: Հայերն իրենց ազդեցության պտուղները քաղում են արդեն երկար տարիներ: Նրանք լավ են աշխատել եւ այժմ բերքահավաքի ժամանակն է: Նրանք ուրիշներին էլ են աշխատեցրել, մինչ Թուրքիան դիտորդի դերում է եղել, եզրակացնում է նա:

Իրան-իրաքյան փոխհարաբերությունները բարելավելու նոր ջանքեր

Հոկտեմբերի 13-ին Իրանի ԱԳ նախարար Քամալ Խարազին «Իրանեյր» ավիաընկերությանը պատկանող ինքնաթիռով ժամանեց Բաղդադ, ինչն ինքնին Իրաքի նկատմամբ ՄԱԿ-ի սահմանած բռնարգելքները թուլացնելու եւս մեկ քայլ էր՝ թերեւս խիստ ցանկալի Բաղդադին: Այցի նպատակը երկկողմ փոխհարաբերություններում առկա տարաձայնությունների շուրջ բանակցելն է, որտեղ անշուշտ, ընդարկվելու է նաեւ Միջին Արեւելքում ստեղծված ծգնաժամի հարցը, որը Բաղդադը ձգտում է օգտագործել ի շահ հարեւան երկների հետ իր կապերի բարելավման, մանավանդ որ Իրանը նախագահում է Իսլամական համաժողով կազմակերպությունում: Այցի վերաբերյալ կողմերի միջեւ պայմանավորվածություն է ձեռք բերվել դեռեւս սեպտեմբերին՝ Վենեսուելայում: Դա 1990 թ. ի վեր այդ մակարդակի առաջին այցն է, որը միաժամանակ փոխայց է Իրաքի ԱԳ եւ տրանսպորտի ու կապի նախարարների իրանյան այցերի:

1988 թ. օգոստոսի 18-ին իրան-իրաքյան 8-ամյա պատերազմն ավարտվեց՝ ՄԱԿ-ի միջնորդությամբ կողմերի միջեւ հրադադարի հաստատմամբ, սակայն առ այսօր Բաղդադ-Թեհրան խաղաղության պայմանագիր չի կնքվել: Թեեւ Խարազին Բաղդադ ժամանելով հույս հայտնեց, որ երկու երկրների փոխհարաբերություններում նոր էջ է բացվելու, սակայն նրանց միջեւ առկա տարաձայնություններն այնքան լուրջ եւ բարդ են, որ մեկ-երկու այցով ու փոխայցով զգալի հաջողություն չի արձանագրվի. դրա համար կողմերը դեռեւս պետք է բավական դժվարին ճանապարհ անցնեն: Նախ, թեեւ 1990 թ. օգոստոսի 14-ին Իրաքի նախագահ Սադամ Հուսեյնը Իրանի նախկին նախագահ Ալի Աքբար Ռաֆսանջանին հղած գրավոր ուղերձում հայտնել է, թե ընդունում է 1975 թ. Ալժիրի պայմանագիրը, որը պատերազմի նախօրեին հեռուստատեսությամբ, ի տես բոլոր իրաքցիների, պատռել էր, սակայն առ այսօր այդ առնչությամբ պաշտոնապես փաստաթղթեր չեն փոխանակվել եւ պաշտոնական հայտարարություն չի արվել: Բացի դրանից, լիովին չի լուծվել ռազմագերիների փոխանակման հարցը. իրանական կողմը մի քանի ամիս առաջ Բաղդադին հանձնեց իրաքցի վերջին ռազմագերիներին, միաժամանակ հայտարարելով, որ դեռեւս 5 հազար իրանցի ռազմագերիներ կան Իրաքում: Կարեւոր, բայց դժվար լուծելի հարց է նաեւ ռազմատուգանքի վճարումը, չնայած 1990 թ. դեկտեմբերի 10-ին ՄԱԿ-ը հայտարարեց, որ Իրաքը պատերազմի պատասխանատու է, իսկ մասնագետներից կազմված անկախ հանձնաժողովը պատերազմի անմիջական վնասները գնահատեց 97 միլիարդ 200 միլիոն դոլար, սակայն առ այսօր Իրաքը հրաժարվում է նման պատասխանատվություն կրել, հետեւաբար հրաժարվում է նաեւ ռազմատուգանք վճարելուց: Մյուս կողմից ՄԱԿ-ը այս առնչությամբ լուրջ եւ պարտավորեցնող փաստաթուղթ չի ընդունել: Բացի դրանից, Պարսից ծոցի երկրորդ պատերազմի ընթացքում Իրաքն իր ռազմական եւ քաղաքացիական ինքնաթիռների որոշ մասը հակաիրանյան դաշինքի ռմբակոծություններից փրկելու նպատակով տեղափոխեց Իրան, որոնք առ այսօր մնում են այնտեղ: Ըստ պաշտոնական Բաղդադի, Իրան է տեղափոխվել 115 ռազմական եւ 37 քաղաքացիական ինքնաթիռ. ի դեպ մինչեւ 1996 թ. Բաղդադը քաղաքացիական ինքնաթիռների թիվը 23 էր հայտարարում: Մինչդեռ Թեհրանը բազմիցս հայտարարել է, որ Իրանում գտնվում է Իրաքի միայն 22 ինքնաթիռ, որոնց վերադարձնելու հարցը կքննարկվի ՄԱԿ-ի համաձայնությամբ եւ Իրաքի նկատմամբ բռնարգելքների վերացումից հետո: Ի վերջո, վերոհիշյալներից զատ, առկա է նաեւ Իրաքում տեղակայված Իրանի զինված ընդդիմադիր «Մոջահեդին խալք» կազմակերպության ռազմական ճամբարների հարցը, որտեղից կազմակերպության անդամներն Իրան ներթափանցելով կատարում են ահաբեկչական գործողություններ, որոնք վերջին մեկ տարվա ընթացքում բավական ինտենսիվ բնույթ են կրում: Մյուս կողմից Թեհրանում է գտնվում Իրաքի վարչակարգի դեմ գործող ամենաազդեցիկ կազմակերպություններից մեկի՝ Իրաքի իսլամական հեղափոխության գերագույն մեջլիս կազմակերպության ղեկավարությունը:

Է. Ռ.

Բրիտանացի քաղաքագետները սիրաշահում են իրանցիներին

Նախապատրաստվելով հաջորդ տարվա օրենսդրական ընտրություններին, Բրիտանիայի երկու մեծ քաղաքական մրցակիցները՝ վարչապետ Բլերն ու ընդդիմադիր պահպանողական կուսակցության ղեկավարը, սկսել են «սիրաշահել» իրենց երկրի իրանցիներին, հաղորդում է «Սիրիա թայմս» օրաթերթը:

Երկու կուսակցությունների ղեկավարների վերջերս կայացած երկխոսության ժամանակ Բլերը գովաբանել է Եհուդ Բարաքին ասելով, որ նա «ամեն միջոց օգտագործել է պաղեստինցիների հետ հաշտություն կնքելու համար», եւ կոչ է արել Արաֆաթին հետեւելու նրա օրինակին: Վարչապետը նույնպես գովասանական խոսքեր է ուղղել Միջին Արեւելքի հարցերով իր խորհրդական Մայքլ Լիվային, որն, անկախ արտգործնախարար Ռոբին Կուքից, նշանակվել է հատկապես Միջին Արեւելքի խնդիրներով զբաղվելու համար:

Իր հերթին, պահպանողական կուսակցության ղեկավարը երկու ռաբբիների է նշանակել՝ առաջիկա տարվա ընտրությունների իր ծրագիրը գործադրելու համար:

Մյուս կողմից, Սաուդյան Արաբիայում Բրիտանիայի նախկին դեսպան Դեյվիդ Գորբոքը, որն արաբների անխոնջ պաշտպանն է, ցավ է հայտնել, որ իր երկրի դերը նվազել է խաղաղության գործընթացում: Արաբա-բրիտանական փոխըմբռնման մթնոլորտը բարելավելու եւ խաղաղության գործընթացը խթանելու նպատակով կազմակերպված դասախոսության ընթացքում նա կոչ է արել ամերիկացի եւ բրիտանացի քվեարկողներին ավելի ճիշտ հասկանալ իրենց ղեկավարների սխալները եւ ըստ այդմ կողմնորոշվել ընտրությունների ժամանակ:

ՀԱՐԱՎՍԼԱՎԻԱ

Կոշտունիցան չափավորում է իր ազգայնականությունը

Երկու կարեւոր պարտավորություն

Եվրամիության օգնությունն ակնկալող Հարավսլավիայի նոր նախագահ Վոյիսլավ Կոշտունիցան բազմաթաղկում է բարի կամքի քայլերը: Դրա վկայությունը Ֆրանսիայի Բիարից քաղաքում շաբաթ օրը կայացած ԵՄ ղեկավարների «ոչ պաշտոնական» հանդիպումն էր, որ հրավիրված էր նաեւ Կոշտունիցան: Նորընտիր նախագահը ներկաներին հավաստիացրեց, որ «Հարավսլավիայի Դաշնային Հանրապետությունը վաղը Բալկանների խաղաղության երաշխավորն է լինելու»:

14 ամիս առաջ՝ Բելգրադի համաժողովի օրերին, ՆԱՏՕ-ի օդուժը ռմբահարվածներ էր հասցնում Սերբիային: Իսկ Բիարիցի հանդիպումը նշանավորվեց նրանով, որ Հարավսլավիան վերադարձավ «եվրոպական ընտանիք»: Կոշտունիցան մասնավորապես հայտարարեց. «Այս հանդիպման իմաստը հարավսլավացիների, սերբերի, չեռնոգորցիների համար այն է, որ մենք Եվրոպայի մասն ենք եւ միասին ենք նայում ապագային»: Հարավսլավիայում տասնամյա բռնապետությանը վերջ դրած իրավաբան նախագահը Բիարիցում հստակեցրեց իր քաղաքական կողմնորոշումը:

ԵՄ ղեկավարներին առանձնակի գոհունակություն պատճառեցին Կոշտունիցայի պարտավորություններից երկուսը: Առաջինը միջազգային քրեական դատարանի հետ գործակցելու պատրաստակամությունն է: Ցիշտ է, Կոշտունիցան նշեց, որ պատերազմական ոճիրների եւ մարդկության դեմ գործած հանցանքների համար Սլոբոդան Միլոշեւիչին Հաագայի դատարանին հանձնելն իր «առաջնահերթ խնդիրը չէ», քանի որ ինքը նախ ուզում է ոտքի կանգնեցնել երկիրը: «Բայց Միլոշեւիչը Հարավսլավիայում քաղաքական ապագա չունի», հավաստիացրեց նա:

Կոշտունիցայի երկրորդ պարտավորությունը կապված է հանրաքվեի հետ: Ընդգծելով, որ ինքն անիմաստ է համարում «Մեծ Սերբիայի» գաղափարը, նախագահը պարտավորվեց Սերբիայում եւ Չեռնոգորիայում երկու առանձին հանրաքվե անցկացնել՝ պարզելու, թե այդ հանրապետություններն արդյոք ուզո՞ւմ են մնալ միացյալ պետության կազմում: Կոշտունիցան խոստացավ դրական պատասխանի դեպքում պետությունը վերանվանել «Սերբիա-Չեռնոգորիա»՝ հրաժարվելով 1918 թ. հորինված «Հարավսլավիա» անվանումից:

Հանդիպման կազմակերպիչ Ֆրանսիայի նախագահ ժակ Շիրակը Հարավսլավիայի մասին խոսելիս հայտարարեց. «Մենք այստեղ չենք եկել պայմաններ առաջադրելու»: Կարելի է ասել, Կոշտունիցան հանդիպման մասնակիցների ուշադրության կենտրոնում էր: «Լիբերասիոն» թերթը գրում է, որ թեեւ նա չխոստացավ մոտ ժամանակներս Միլոշեւիչին հանձնել Հաագայի դատարանին կամ ազատել սերբական բանտերում պահվող շուրջ 1000 կոսովցիներին, այդուհանդերձ Բիարիցը թողեց 200 միլիոն եվրոյի չեկը գրպանում: Իսկ ժակ Շիրակը խոստացավ, որ նախկին Հարավսլավիայի բոլոր երկրներն իրենց լիարժեք տեղը կունենան եվրամիությունում:

1991 թվականից մինչեւ օրս Բալկաններում եվրամիությունը 17 մլրդ եվրո է ծախսել, բայց կայունացմանն ուղղված քայլերը չնչին արդյունք են տվել: Այժմ, երբ Միլոշեւիչի հետ կապված վտանգը վերացած է, նոյեմբերի 24-ին Զագրեբում կայանալիք ԵՄ-Բալկաններ գագաթաժողովը կարող է իրական իմաստ հաղորդել 1999 թ. հուլիսին ՄԱԿ-ի ընդունած «Հարավարեւելյան եվրոպայի կայունության համաձայնագրին»:

Պ. Ռ.

ՌՈՅԵՐ-ՏԱՍՍ/ՊՐԵՍ

«Էշելոն» համակարգը թակարդել է Եվրոպան

Ֆրանսիացիները մեղադրում են բրիտանացիներին

Էլեկտրոնային լրտեսման անգլո-սաքսոնական «Էշելոն» ցանցի գործունեությունը հատուկ ինքնության առարկա է դարձել Ֆրանսիայի խորհրդարանում: Դրանով զբաղվող տեղեկատվական խումբը դատապարտել է Մեծ Բրիտանիայի «երկդիմի դիրքը» համաշխարհային էլեկտրոնային ունկնդրության այդ համակարգի ստեղծման եւ գործունեության մեջ: Գրեթե բացառապես Վաշինգտոնի կողմից վերահսկվող այդ համակարգի մեջ, ԱՄՆ-ից բացի, մտնում են Կանադան, Նոր Զելանդիան, Ավստրալիան եւ Մեծ Բրիտանիան:

Ֆրանսիայի խորհրդարանի տեղեկատվական խմբի փորձագետ, Վարի դեպարտամենտի պատգամավոր Արթուր Պեշը զեկուցագրում նշում է, որ եվրամիությունը թակարդված է էլեկտրոնային լրտեսման անգլո-սաքսոնական համակարգի կողմից: Մասնավորապես Մեծ Բրիտանիայի Մենվիթ Հիլ վայրում ամերիկացիները տարավորել են «Էշելոնի» գաղտնի ունկնդրության կայան, որտեղ աշխատում են 1200 ամերիկացի եւ 600 բրիտանացի: Բացի դրանից, երկու երկրները վաղուց գործակցում են հետախուզության ոլորտում:

«Սառը պատերազմի» ժամանակներում ռազմական հետախուզման նպատակով ստեղծված «Էշելոն» համակարգը ներկայումս փոխել է բնույթը եւ աշխարհում «որսում է» ամեն տեսակ տեղեկություններ՝ տելեֆոն ու ֆաքսի հաղորդումներ, հեռախոսագրույցներ, էլեկտրոնային փոստի նյութեր: Մինչեւ, օրինակ, մասնավորապես հեռախոսագրույցների ունկնդրությունն օրենքով արգելված է:

«Էշելոն» համակարգի միջոցով անգլո-սաքսոնները զբաղվում են նաեւ տնտեսական լրտեսմամբ, այդ թվում դաշնակիցների՝ եվրամիության երկրների ձեռնարկությունների գործերի վերահսկողությամբ: Ամերիկացիներն ասում են, թե դա իբր անհրաժեշտ է միջազգային արգելքները խախտող կամ քաղաքացիականը զուգահեռ ռազմական արտադրանք բողարկող ձեռնարկություններին բացահայտելու համար:

Զեկուցագրով պահանջվում է, որ միջազգային բանակցություններ սկսվեն եվրոպացիներին լրտեսումից պաշտպանելու, նրանց հանրային եւ անհատական ազատություններն ապահովելու նպատակով: «Մոնդ» թերթը գրում է, որ «Էշելոն» համակարգի դեմ պայքարելու համար եվրամիությունը պետք է ստեղծի վստահելի համակարգչային ծրագիր եւ կանոնակարգի վերծանման ծրագիրը, իսկ համաշխարհային մակարդակով հարկավոր է մշակել լրտեսման «վարքագծի կանոններ»:

Պ. Ռ.

ԱԶԳ

Մշակույթ

«Հնաւանդ ոգիին աղաղակը»

Զրույց «Բագին» ամսագրի խմբագիր, լիբանանահայ գրող Պողոս Մնացականի հետ, որ վերջերս հյուր էր Երևանում

Սփյուռքահայ գրող Պողոս Մնացականը ծնվել է 1927 թ. Մուսա լեռան Բիքիաս գյուղում: Երեք տարի սովորել է տեղի նախակրթարանում: 1939 թ. Ֆրանսիական կառավարության աջակցությամբ Մուսա լեռան ըմբոստները փոխադրվում են Լիբանանի Այնճար գյուղը, որտեղ Պողոս Մնացականը շարունակում է ուսումը «Յառաջ» նախակրթարանում, ապա ընդունվում է Երուսաղեմի «Ժառանգավորաց» վարժարանը բախտ ունենալով աշակերտելու մեծահռչակ գրագետ, ճնշաղաս եւ ուսուցիչ Հակոբ Օշականին, որտեղից էլ սկսվում է նրա կյանքի անկյունադարձը. վարակվում է գրականության ավյունով: Մինչեւ օրս շարունակելով գրական ակտիվ գործունեությունը: 1950 թ. տեղափոխվում է Բեյրութ, զբաղվում ուսուցչությամբ, միաժամանակ զանազան պարբերականներում («Ազդակ», «Ազդարար», «Ալիս», «Նահիր») հրապարակելով գրականագիտական, ընտանեական հոդվածներ: 1957-59 թթ. խմբագրել է «Միջնաբերդ» գրական տարեգիրքը:

Իշխան, Էդվարդ Բոյաջյան, Սմբատ Փանոսյան: Պատերազմեն ետը շարունակեցին նույն մթնոլորտին մեջ, հետպատերազմյան սերունդին մոտ մեկ քեւին վրա եվրոպական ազդեցությունները զգալի դարձան, եւ հայկական նյութերու կարգին մարդկային հարցեր շոշափեցին, որոնց գնահատանքը դժվար է տալ: Բոլոր այս անունները փիչ բացառությամբ «Բագինին» մեջ ունեցած են իրենց տեղերը հիները, միջին սերունդը, նորերը:

– Նշեցիք «Բագին» ամսագիրը, սակայն «Բագինը» իբրեւ սփյուռքում 38 տարի շարունակաբար լույս տեսնող լավագույն եւ առաջատար գրական ամսագիր, գրեթե անծանոթ է հայաստանյան գրասեր ընթերցողին: Ավելի հանգամանորեն կանդրադառնա՞ք հանդեսի բնույթին, աշխատանքներին:

– «Բագինը» իբրեւ գրական հանդես, նոպատակ ունի զուտ գրականության զարգացումը: Իրավ է, մարմնի, ինչպես նաեւ Համազգայինի կենտրոնական վարչության հովանավորությունը, սակայն հոն տեղ գտած են կուսակցական տարբեր կեցվածքներ ունեցող արժանավոր, նաեւ կուսակցական պատկանելություն չունեցող առանձնահատուկ ոճի տեր ամեն գրող: Որեւէ ծեւով ճնշում չէ եղած: «Բագինը» հատուկ հետաքրքրությամբ մը ծառացած է այն բոլոր կողմնակալ վերաբերումներուն, որոնք երեւցած են հայաստանյան պատասխանական օրգաններու մեջ՝ արեւմտահայ գրականության որոշ գործերուն առիթով: Քանի մը անուն տամ, որոնց գործերուն տպագրության առիթով մենք ուղղակի ամչցած ենք եւ արտահայտած ենք մեր ցասումը: Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի», Հակոբ Օշականի մի հատորյակի, Վահան Թեքեյանի ժողովածուի, Հրաչ Զարդարյանի «Մեր կյանքը» վեպին, Զավեն Սյուրմելյանի «Հարց կու տամ ձեզի տիկիններ եւ պարոններ» պատմվածքների ժողովածուի: Հիշյալ գործերեն ոչ մեկ իրենց ամբողջության մեջ չեն ներկայացված հայաստանյան ընթերցողին եւ բոլորն ալ ենթարկված են կամայական հաղավումներու: Կը ցավիմ, որ միայն «Բագինին» էր մնացեր այս պարտավորությունը: Խոր ցավ ապրեցանք այն պատճառով, որ Հայաստանի մեջ տպագրված գործերուն առթով հեղինակները բողոքի ձայն չբարձրացուցին իրենց «մտքի զավակները» խորտակված տեսնելեն ետ:

– Այսպես ակտիվորեն արձագանքելով հայաստանյան գրական իրադարձություններին եւ հետեւելով գրական մամուլին՝ ի՞նչ վերաբերմունք էք ունեցել ժամանակին հայաստանյան գրական այն սերնդի հանդեպ, որի գեղագիտական նոր ըմբռնումները մերժվում էին խորհրդահայ գրաքննադատների կողմից:

– Երբեւէ Հայաստանի գրականությունը չենք անջատած մեզմե: Սակայն մեր սուղ միջոցները տրամադրած ենք արեւմտահայ լեզվին եւ գրականության, այն պարզ նկատումով, որ հայաստանյան գրողները լայն ասպարեզ ունին: Սակայն ամյակների առիթով բացառիկներ նվիրած ենք Չարենցին, Բակունցին, Գալշոյանին, ինչպես նաեւ մասնակի թիվեր Համո Սահյանին, Վահագն Դավթյանին, Ռազմիկ Դավոյանին, Ալբերտ Կոստանյանին: Իսկ նոր սերունդը, որ ընթրստացավ հիներուն դեմ, հին ընթրնումներուն դեմ, պայմանական ձեւով մը ըսած՝ Հենրիկ Էդոյանի սերունդը, որոնք կտրժվեին պաշտոնական մամուլին կողմե, ծավալուն էջերով ներկայացված են «Բագինի» մեջ: Եվ երբ հարձակման ենթարկված են անոնք անիրավաբար, անշուշտ, «Բագինը» տեր դարձած է անոնց իրավունքներուն եւ ընթրնումներուն:

– Սփյուռքահայությունն իր ինքնության պահպանման համար ամենատարբեր միջոցներ է դիմել: Այդ առումով մեծ փորձառություն ունեք: Այսօր Հայաստանում ստեղծված կյանքի դժվարին պայմանները սիրում են շաստերին արտագաղթել...

– Կը ճանչնամ գրեթե ողջ երկրագունդը եւ ամբողջ կյանքս մեր ժողովուրդի մտերմության մեջ անցուցած եմ: Հերոսապաշտ նկարագիր ունիմ եւ դաշնակցական հերոսներու մթնոլորտեն դուրս ինքնին չեմ նրնար պատկերացնել: Ինձի համար հողը եւ ազատությունը նույնարժեք իրողություններ են: Ասած եմ եւ գրած եմ՝ ազատությունը հայրենիքին մեջ, եւ հայրենիքը ազատության մեջ: Ազատությունն ի՞նչ նշանակություն ունի հայրենիքեն դուրս: Ես գիտեմ՝ ինչ կնշանակե սոցիալական տառապանք: Դժվարության բոլոր երեսները ծանոթ են ինձի, գաղթականությունը ծանոթ է ինձի, վեց անգամ պայթած պատերազմներու մեջ ընչած եմ, հետեւաբար՝ խոսքս քաղքենի մարդու տրամադրություններու վրա հիմնված չէ, այլ՝ տրամադրություններու խորք մը ունի: Մեր միակ ելքը հայրենի հողի վրա է: Պիտի ուզեի, որ դժվարություններու տակային եւ դյուրակեցության հեռանկարներով չլեքին այս սրբազան հողը, որ արեւին տակ մեր ամենեն մեծ հարստությունն է, ուր կրնան ածիլ տաղանդներ, ընդունակություններ: Սրբապղծության համագոր կարծիք մը կտանջե զիս: Թրքական ջարդերը մեր ճակատագրին մեջ այնքան մեծ աղետ չէին, որքան տեղահանությունը, որովհետեւ ջարդեն ճողոպրած բեկորները եթե հայրենի հողին վրա ըլլային, մեր թիվը տասնապատկված կըլլար մեր հողերուն վրա եւ թվական ածին հետ բազմապատկված կըլլար մեր որակը: Ես հողին ու անոր զորության եւ սրբության հավատացող մարդ եղած եմ: Դուրս եկողները անկախ մեր տրամադրություններեն եւ ճիգերեն ճակատագրականորեն ենթակա են ոչնչացման ազգային իմաստով: Լիբանանյան փորձառություն մը ունինք, մենք իբրեւ կուսակցություն խստագույն միջոցներու դիմեցինք արգիլելու համար արտագաղթը այն համոզումով, որ լիբանանահայ հավաքականությունը պետք չէ քայքայվի՝ հանուն արդողներու եւ հանուն Հայաստանի: Մենք կուսակցականորեն այն համոզումը ունինք, որ այս պահուն մեր ժողովուրդը կամ հայրենի հողի վրա պիտի ապրի, կամ հավաքաբար: Որովհետեւ հայրենի հողեն դուրս եւ հավաքականությունե անջատ որեւէ անհատ չի կրնար իր ազգային պատկանելությունը պահել: Այս կեցվածքը լիբանանյան արտագաղթողներուն դեմ չէր միայն, այլ Խորհրդային Հայաստանեն դուրս եկողներուն հանդեպ: Կը հիշեմ «Ազդակ» օրաթերթին մեջ խմբագրական գրվեցավ այն հիմամբ, որ Հայաստանեն արտագաղթողներուն օժանդակող անձերուն ֆիզիկապես պիտի պատասխանենք: Մենք հողին արժեքը պիտի այս սահմաններուն մեջ գնահատենք: Մեր ժողովուրդը ատենին ավելի քարվոր չէ արարած երկրագնդի վաղորդայնին դարձյալ Հայաստանի ժողովուրդը ենթարկված էր նման չհավատության, ընկերային դժվարություններու: Բայց համբերեց, եւ արդյունքները ծանոթ են:

– Երկփեղկված ազգ ենք մեր ճակատագրով, տարածքով, լեզվով, ուղղագրությամբ: Ասում ենք՝ մեկ ազգ, մեկ հայրենիք, մեկ մշակույթ: Զրուցում ենք հայերենով, բայց ես շատ զգույշ եմ գրելիս, հանկարծ թե չվիրավորեմ լեզվական նրբությունների մեջ:

– Լեզվական տվյալը շատ էական նշանակություն ունի եւ արհեստական ձեւով չի հարթվիր: Փոխադարձ հասկացողություններով այդ հարցը պիտի ունենա բարվոք լուծում՝ իրարու մեջ միաձուլվելու: Կոստան Զարյան, Եղիշե Չարենց, Պարույր Սեւակ այս ուղղությամբ արդեն լուռ աշխատանք մը տարած են: Եթե արեւելահայ եւ արեւմտահայ լեզվաբանները տրամաբանական հիմքով մը ընդունին ուղղագրական համաձայնություններ, ես անոր դեմ չեմ կարող ընդվզիլ: Իմ պայմանս բոլորը մեկ ուղղագրություն գործածելու պայմանն է: Երկու ուղղագրություն ունեցող ժողովուրդ մը շատ ընթռնելի չէ ինձի համար:

ՄԵԼՍԵՆ ԲԱՂԱԼՅԱՆ

ՀՈԲԵԼՅԱՆ

Մեղմ, խստացված շեշտադրությամբ

Երեկ Երեւանի Խաղաղաղեստարանի Հրաչյա Դափլանյանի անվան դրամատիկական թատրոնը նշեց իր ակնառու դերասաններից մեկի՝ Էդուարդ Գասպարյանի ծննդյան 50-ամյա հոբելյանը:

Էդուարդ Գասպարյանի անունը ծանոթ է թատերասեր հանրությանը: Կերպարային ժանրի դերասան, որ հիշյալ թատրոնում անցել է 20 տարիներից ի վեր բեղուն ստեղծագործական ճանապարհ: Դերասան, որի կերտած մարդկային տիպերը, մշտապես առանձնանալով վառ բնութագրմամբ, երկար ժամանակ



ՍՊԻՏԱԿԻՑ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ

մնում են հանդիսատեսի հիշողության մեջ: Դասվում են նրա երբեմնի տեսածվայելած անմոռանալի կերպարների շարքը:

Դերասանի ձիրքն արժանվույնս գնահատելով, 1977-ին Հրաչյա Դափլանյանը նրան իր թատրոն հրավիրեց. հույս էին ներշնչել Էդուարդ Գասպարյանի Երեւանի թատերական ինստիտուտում կատարած դիպլոմային աշխատանքները, որ լուրջ հայտ էին երիտասարդ դերասանի համար:

Թատրոնում առաջին իսկ դերերի մարմնավորումը՝ Ռենալդո (Շեքսպիր «Համլետ»), Լաուչենկո (Արբուզով «Իրկուտսկյան պատմություն»), Վոռմ Շապուի (Լ. Թուխիկյան «Կանաչ սվեր»)... միանշանակորեն հավաստեց, Դափլանյանը ընտրության մեջ դարձյալ չի՝ սխալվել, հավատարիմ է մնացել յուրաքանչյուր տաղանդ իր տեսակի մեջ գնահատելու սկզբունքին:

Էդուարդ Գասպարյանի հետագա դերերը. Պետրուս (Շեքսպիր «Ռոմեո եւ Ջուլիետ»), Անտոնիոսի ծառա (Շեքսպիր «Հուլիոս Կեսար»), Լուկա (Մոլիերի «Ակամա բժիշկ»), Ջեներալ (Իոնեսկո «Արքան է մեռնում»)... հաստատեցին այն ճշմարտությունը, որ թատրոնում փոքր դերեր չկան: Էդուարդ Գասպարյանն օժտում է իր մարմնավորած մարդկային կերպարներն իրատեսության, ալեգորիայի եւ ընդհանրականության հետաքրքիր եւ յուրօրինակ համադրությամբ: Հաղորդում է նրանց ինքնահատուկ կոլորիտ, եւ խաղում իր հերոսների նկատմամբ հանդիսատեսի ամենաակտիվ ու անմիջական վերաբերմունքը: Երեւույթ, որ անչափ կարեւոր է բեմական արվեստում եւ դերասանի պրոֆեսիոնալ ձիրքի վառ գրավականներից մեկն է:

Դերասանն իր բեմական խաղը կառուցում է հիմնականում սեղմ, խստացված, երբեմն պատշաճորեն գրոտեսկային շեշտադրվածությամբ, ստեղծում լակոնիկ «ֆիլմակադրային» միգանցներ՝ հաղորդելով դրանց ամբարտեսք, իմաստ, ասելիք:

«Էդուարդ Գասպարյանն այն դերասանն է եւ այն մարդը, առանց որի չի կարող գոյություն ունենալ թատրոն հասկացությունն ընդհանրապես՝ եւ, անշուշտ, մեր Դրամատիկականը», վավերում է Արքուր Ուրմազյանը:

...Ժան Բատիստ Մոլիերի «Ակամա բժիշկ» ներկայացման ավարտից անմիջապես հետո հանդիսատեսի ծափողջույնների ներքո սրամիտ-տոնական արարով թատրոնի դերասանները շնորհավորեցին սիրված խաղընկերոջ հոբելյանը: Թատրոնի գեղարվեստական ղեկավար, ռեժիսոր Արմեն Խանդիկյանը բարձր գնահատեց Էդուարդ Գասպարյանի նվիրվածությունը թատրոնին, մաղթանքի խոսքեր եւ ընծա մատուցեց դերասանին «Թատրոն» հիմնադրամը՝ հանձին նախագահ Վլադիմիր Մարյանի:

Մոլիերի փայլուն խաղացված երաժշտական կատակերգությունը եւ ներկայացումից հետո շարունակվող բացառիկ ջերմ տոնական մթնոլորտը եւս մի արտահայտիչ երեկո դարձան Դրամատիկականի բազում երկրպագուների համար:

ԹԱՄԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱԶԳ

Մարզական

ՖՈՒՏԲՈԼ

Առաջատարների ոչ-ոքին

Հայաստանի առաջնության բարձրագույն խմբի մրցաշարի 23-րդ տուրի կենտրոնական հանդիպումն անցկացվեց Աբովյանում: Մրցեցին երկու առաջատարները՝ Երեւանի **«Արարատն»** ու Գյումրիի **«Շիրակը»**: Հանդիպման կարեւորությունն իր կնիքն էր դրել պայքարի բնույթի վրա: Ամբողջ ընթացքում զգացվում էր ներքին լարվածությունը, ու նաեւ դա էր պատճառը, որ խաղն այնքան էլ դիտարժան չէր: Հանդիպման առաջին կեսում հավասար պայքար ընթացավ, իսկ երկրորդ խաղակեսում գյումրեցիներն ակնհայտ առավելություն ունեին: Այդուհանդերձ, ոչ մի գոլ չգրանցվեց՝ 0-0:

Վստահ հաղթանակ տարավ Արարատի **«Արմավիրը»**, որն իր դաշտում ընդունել էր Երեւանի **«Կիլիկիային»**: Առաջին խաղակեսում 2 գոլ խփեց առաջնության ռմբարկուն Արա Հակոբյանը (7, 31), արդա հանդիպման երկրորդ կեսում աչքի ընկավ Հայկ Հարությունյանը (71): Հաղթելով 3-0 հաշվով՝ «Արմավիրը» զգալիորեն բարելավեց իր մրցաշարային գործերը:

Անհաշտ պայքարում ընթացավ վերջնապահների՝ Երեւանի **«Դինամոյի»** եւ Կապանի **«Լեռնագործի»** հանդիպումը: Խաղն այդպես մարսական ոչ-ոքի էլ ավարտվեց՝ 1-1: Առաջին խաղակեսում հաշիվը բացեց կապանցի Անուշավան Փահլեւանյանը (35), արդա երկրորդում երեւանցի Արսեն Մելոյանը հավասարեցրեց այն (79): Այս խաղն առանձնացավ ֆուտբոլիստների անկարգապահությամբ: Մրցավարը խաղավարտին մոտ նախ հեռացրեց Մարաս Մկրտչյանին («Դինամո») ու Անուշավան Փահլեւանյանին («Լեռնագործ»), արդա եւ մի քանի րոպե անց՝ վերջինիս թիմակից Տիգրան Հովհաննիսյանին:

Տուրի չորրորդ հանդիպումը, Երեւանի **«Զվարթնոցի»** եւ Աշտարակի **«Միկայի»** միջեւ, չկայացավ: Հյուրընկալող կողմը՝ «Զվարթնոցը», հրաժարվեց խաղալուց: Պատճառաբանությունները երկուսն էին՝ թիմի ֆինանսական վատ վիճակը եւ խաղադաշտի անպատրաստ լինելը: Ֆուտբոլի հանրապետական ֆեդերացիայում խիստ ու անգիջում գտնվեցին «Զվարթնոցի» նկատմամբ: Թիմին 0-3 հաշվով պարտություն գրանցվեց:

Մրցաշարային աղյուսակ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Արարատ	23	14	5	4	39-21	47
2. Արմավիր	23	14	4	5	51-29	46
3. Շիրակ	23	13	7	3	55-16	46
4. Միկա	23	13	4	6	48-30	43
5. Զվարթնոց	23	10	8	5	39-29	38
6. Կիլիկիա	23	6	3	14	38-49	21
7. Լեռնագործ	23	2	3	18	22-71	9
8. Դինամո	23	1	4	18	18-64	7

Ռմբարկուները

Արա Հակոբյան («Արմավիր»)	18
Տիգրան Եսայան («Արարատ»)	15
Սամվել Նիկոլյան («Միկա»)	15
Արթուր Պետրոսյան («Շիրակ»)	14
Սարգիս Նազարյան («Զվարթնոց»)	10
Արման Քարամյան («Կիլիկիա»)	10

Չափազանց սրվել է պայքարը չեմպիոնի կոչման ու մրցանակային տեղերի համար, եւ ամեն ինչ կորոշի առաջնության եզրագիծը: Ներկայացնենք վերջին հինգ տուրերի խաղացանկը:

24-րդ տուր
22 հոկտեմբերի (կիրակի)

«Լեռնագործ»-«Արարատ»	ժ. 15:00
«Շիրակ»-«Արմավիր»	ժ. 15:00
«Կիլիկիա»-«Զվարթնոց»	ժ. 16:00
«Միկա»-«Դինամո»	ժ. 16:00

25-26 հոկտեմբերի
Պահեստային օրեր

25-րդ տուր
29 հոկտեմբերի (կիրակի)

«Միկա»-«Լեռնագործ»	ժ. 15:00
«Դինամո»-«Կիլիկիա»	ժ. 15:00
«Զվարթնոց»-«Շիրակ»	ժ. 15:00
«Արմավիր»-«Արարատ»	ժ. 15:00

26-րդ տուր
4 նոյեմբերի (շաբաթ)

«Լեռնագործ»-«Արմավիր»	ժ. 14:00
«Արարատ»-«Զվարթնոց»	ժ. 14:00
«Շիրակ»-«Դինամո»	ժ. 14:00
«Կիլիկիա»-«Միկա»	ժ. 14:00

7-8 նոյեմբերի
Պահեստային օրեր

27-րդ տուր
11 նոյեմբերի (շաբաթ)

«Կիլիկիա»-«Լեռնագործ»	ժ. 14:00
«Միկա»-«Շիրակ»	ժ. 14:00
«Դինամո»-«Արարատ»	ժ. 14:00
«Զվարթնոց»-«Արմավիր»	ժ. 14:00

28-րդ տուր
16 նոյեմբերի (հինգշաբթի)

«Լեռնագործ»-«Զվարթնոց»	ժ. 14:00
«Արմավիր»-«Դինամո»	ժ. 14:00
«Արարատ»-«Միկա»	ժ. 14:00
«Շիրակ»-«Կիլիկիա»	ժ. 14:00

19 նոյեմբերի (կիրակի)
Հ. Տոնոյանի անվան Վերնագավաթի խաղարկություն

20 նոյեմբերի (երկուշաբթի)
Անցումային հանդիպում Ֆ. Արմավիրում

Եվրագավաթների խաղարկություններում

Սկսվում է երկրորդ շրջանը

Եվրոպական երկրների Չեմպիոնների լիգայի առաջին խմբային փուլում սկսվում է երկրորդ շրջանը. բոլոր 32 թիմերը կանցկացնեն չորրորդ տուրի խաղերը:

Առաջին չորս խմբերի մասնակիցները կխաղան այսօր: Իրար հետ կմրցեն հետեւյալ զույգերը. **առաջին խումբ**՝ «Ռեալ» (Իսպանիա)-«Բայեր» (Գերմանիա), «Սպորտինգ» (Պորտուգալիա)-«Սպարտակ» (Ռուսաստան), **երկրորդ խումբ**՝ «Լացիո» (Իտալիա)-«Արսենալ» (Անգլիա), «Շախտյոր» (Ուկրաինա)-«Սպարտա» (Չեխիա), **երրորդ խումբ**՝ «Լիոն» (Ֆրանսիա)-«Վալենսիա» (Իսպանիա), «Հերենվեն» (Հոլանդիա)-«Օլիմպիակոս» (Հունաստան), **չորրորդ խումբ**՝ «Գլազգո Ռեյնջերս» (Շոտլանդիա)-«Գալաթասարայ» (Թուրքիա), «Շտուրմ» (Ավստրիա)-«Մոնակո» (Ֆրանսիա): Մնացած չորս խմբերի մասնակից թիմերը մրցաստարեզ կմտնեն վաղը: Ահա թե որ զույգերը կհանդիպեն. **հինգերորդ խումբ**՝ «Դեպորտիվո» (Իսպանիա)-«Յուվենտուս» (Իտալիա), «Պանաթինայիկոս» (Հունաստան)-«Համբուրգ» (Գերմանիա), **վեցերորդ խումբ**՝ «Բավարիա» (Գերմանիա)-«Պարի Սեն Ժերմեն» (Ֆրանսիա), «Հելսինբորգ» (Շվեդիա)-«Ռուսենբորգ» (Նորվեգիա), **յոթերորդ խումբ**՝ «Մանչեսթր Յունայթեդ» (Անգլիա)-ՊՍՎ (Հոլանդիա), «Անդերլեխթ» (Բելգիա)-«Դինամո» (Ուկրաինա), **ութերորդ խումբ**՝ «Միլան» (Իտալիա)-«Բարսելոն» (Իսպանիա), «Բեշիքթաշ» (Թուրքիա)-«Լիդս» (Անգլիա):

1/32 եզրափակիչի առաջին խաղերը

ՈՒԵՖԱ-ի գավաթի խաղարկության հերթական փուլի հանդիպումները տեղի կունենան հինգշաբթի օրը:

Իրար հետ խաղեր կանցկացնեն հետեւյալ զույգերը. «Հերտա» (Գերմանիա)-«Ամիկա» (Լեհաստան), «Վերդեր» (Գերմանիա)-«Գենկ» (Բելգիա), «Կայզերսլաուտեռն» (Գերմանիա)-«Իրակլիս» (Հունաստան), «Վիտես» (Հոլանդիա)-«Ինտեր» (Իտալիա), «Ցրվենա Զվեզդա» (Հարավսլավիա)-«Սելտա» (Իսպանիա), «Օսիեկ» (Խորվաթիա)-«Ռաադիդ» (Ավստրիա), ԱԵԿ (Հունաստան)-«Հերֆոլգ» (Դանիա), ՕՖԻ (Հունաստան)-«Սլավիա» (Չեխիա), «Բազել» (Շվեյցարիա)-«Ֆեյենոորդ» (Հոլանդիա), «Լոզան» (Շվեյցարիա)-«Այաքս» (Հոլանդիա), «Հալմստադ» (Շվեդիա)-«Մյունխեն 1860» (Գերմանիա), «Պարմա» (Իտալիա)-«Դինամո» (Խորվաթիա), «Ուդինեզե» (Իտալիա)-ՊԱՕԿ (Հունաստան), «Ռոմա» (Իտալիա)-«Բոավիստա» (Պորտուգալիա), «Էսպանյոլ» (Իսպանիա)-«Գրազ» (Ավստրիա), «Ռայո Վալեկանո» (Իսպանիա)-«Վիբորգ» (Դանիա), «Լիվերպուլ» (Անգլիա)-«Սլովան» (Սլովակիա), «Պորտու» (Պորտուգալիա)-«Վիսլա» (Լեհաստան), «Տիրոլ» (Ավստրիա)-«Շտուտգարտ» (Գերմանիա), «Նանտ» (Ֆրանսիա)-ՍՏԿ (Հունգարիա), «Բորդո» (Ֆրանսիա)-«Սելթիկ» (Շոտլանդիա), «Լոկոմոտիվ» (Ռուսաստան)-«Ինտեր» (Սլովակիա), «Բրյուգե» (Բելգիա)-«Սեն Գալ» (Շվեյցարիա), «Լիլեսթրեմ» (Նորվեգիա)-«Սլավիա» (Չեխիա):

ՇԱԽՄԱՏ

Առջեւում հավակնորդն է

Կասպարով-Կրամնիկ՝ 2-3



Անգլիայի մայրաքաղաքում շարունակվում է «BGN. Աշխարհի առաջնություն» մրցախաղը, որտեղ ուժեղագույնի կոչումը վիճարկում են Ռուսաստանի ներկայացուցիչ երկու շախմատիստներ՝ Գարրի Կասպարովն ու Վլադիմիր Կրամնիկը:

Շաբաթ եւ կիրակի օրերին անցկացվեցին մրցախաղի չորրորդ եւ հինգերորդ պարտիաները: Երկու հանդիպումներն էլ ոչ-ոքի ավարտվեցին, բայց միանգամայն տարբեր ընթացք ունեցան մինչեւ խաղաղ հանգրվան հասնելը:

Չորրորդ պարտիայում սուր պայքար ծավալվեց: Սպիտակներով խաղացող Կրամնիկն առավելություն ստացավ եւ կարող էր պարտիան հաղթական ավարտի հասցնել: Բայց մոտալուտ հաջողությունը շատ հուզեց երիտասարդ շախմատիստին, եւ նա անճշտություն թույլ տվեց: Կասպարովը կարողացավ օգտվել նրա վրիպումից եւ վերջնախաղում հասնել ոչ-ոքիի: Խաղաղ արդյունք գրանցվեց 74-րդ քայլում: Սա մրցախաղի ամենաերկար պարտիան է:

Հինգերորդ պարտիան այլ բնույթ ունեցավ: Ամենայն հավանականությամբ, նախորդ օրվա լարվածությունը, բուռն արդյունները գրոսմայստերներին թելադրեցին այս անգամ հանգիստ խաղալ: Պարտիայում կողմերը չկարացին առանձնակի ակտիվություն դրսեւորել: Խաղը պարզ հունով տանելու նախաձեռնություն հանդես բերեց սպիտակ գույնի խաղաքարերով խաղացող աշխարհի չեմպիոն Կասպարովը: Նա փոխանակեց թագուհիները, որից հետո, 24-րդ քայլում, կողմերը խաղաղ դաշինք կնքեցին: Այսպիսով, հաշիվը դարձավ 3-2՝ հօգուտ հավակնորդի:

Մրցախաղի վեցերորդ պարտիան կկայանա այսօր:

ՄԱՐԴԱՀԱՆԴԵՍ

Առաջին հաղթողները հայտնի են

Ավարտվեց «Առողջ մարմնում առողջ հոգի» նշանաբանով անցկացվող մարզահանդեսի ծրագրում ընդգրկված նարդու մրցաշարը:

Այս մրցաշարում հանդես եկան ժողովրդական խաղի մի քանի տասնյակ սիրահարներ: Հանդիպումներն անցան հետաքրքիր, աշխույժ պայքարում եւ, ինչպես զույգի ժամանակ նշեցին նարդու հանրապետական ֆեդերացիայի նախագահ Մկրտիչ Հովհաննիսյանն ու մրցաշարի գլխավոր մրցավար Ռուբիկ Մարտիրոսյանը, մասնակիցները լավ խաղամակարդակ ցուցադրեցին:

Երկօրյա պայքարում հաղթող դարձավ Վազգեն Միքայելյանը («Օրինաց երկիր» կուսակցություն), որը եզրափակիչում 11-7 հաշվով պարտության մատնեց Վարդան Սիմոնյանին («Ա1+» հեռուստաընկերություն): Վերջինս գրավեց երկրորդ տեղը:

Երրորդ տեղի համար պայքարում եւս հաջողությունն ուղեկցեց «Օրինաց երկրի» ներկայացուցչին. փորձառու Վանիկ Մելիքյանին հաջողվեց 11-6 հաշվով հաղթել Արմեն Մնացականյանին («ԱՐ» հեռուստաընկերություն):

Մարզահանդեսը, որը նախաձեռնել է մարզական լրագրողների հանրապետական ֆեդերացիան, իր ծրագրում եւս երկու մարզաձեւ ունի:

Մինի ֆուտբոլի մրցաշարը մոտեցել է ավարտին, եւ նրա հաղթողների ու մրցանակակիրների անունները հայտնի կդառնան այսօր: Իսկ սեղանի թենիսի մրցաշարը կանցկացվի առաջիկա շաբաթ եւ կիրակի օրերին:

ԲԱԺԻՆԸ ՎԱՐՈՒՄ Է ՌԱՉՄԻԿ ԱՎԱԳՅԱՆԸ

Փորձեք լուծել



Մաս 2 քայլից

Մեր տպագրած նախորդ 2 քայլանի խնդրի լուծումն է 1.Թa8:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

Տիրան Մրբազանը չի ցանկանում հեռանալ Մոսկվայից

Երեկ մեր թերթը տեղեկացավ, որ նախորդ օրը Մոսկվայի Սբ. Հարություն եկեղեցում տեղի է ունեցել բողոքի ցույց ընդդեմ Ամենայն հայոց հայրապետի վերջին որոշման, ըստ որի, ինչպես տեղյակ են մեր ընթերցողները, այլ պատասխանատվության կոչվելու կապակցությամբ Մոսկվայից հեռ. Մայր աթոռ Ս. Էջմիածին է կանչվում Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տիրան արք. Կյուրեղյանը: Մի քանի տասնյակ ցուցարարներ, Սբ. Հարություն եկեղեցում Սանկտ Պետերբուրգի Հայոց հոգեւոր հովիվ Եզրաս աբեղա Ներսիսյանի (Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի եղբայրը) մատուցած պատարագից հետո հավաքվելով եկեղեցու բակում, դժգոհություն են հայտնել Վեհափառ հայրապետի որոշումից եւ պնդել, որ դրանով թեմը զրկվում է հավատացյալների «ամբողջական աջակցությունը վայելող առաջնորդից»: Նկատի ունենալով վերջինիս «վայելած աջակցության» իսկական չափը, ինչպես նաեւ Տիրան Մրբազանի վերջին 10 տարիների խարդավալի գործունեության էությունը հենց Մոսկվայի գաղթօջախում, դիտորդները չեն խուսափում պնդելուց, որ ցույցի հրահրողը եղել է նույնինքն Տիրան Մրբազանը: Ճիշտ է, ելույթ ունենալով ցուցարարների առաջ, վերջինս նրանց հորդորել է ոչ թե հանրահավաքով, այլ գրավոր ներկայացնել իրենց անհամաձայնությունը Վեհափառ հայրապետին, սակայն միաժամանակ չի զլացել հրապարակելու Սբ. Հարություն եկեղեցու ծխական խորհրդի որոշումը՝ իրեն ծխի հովիվ նշանակելու մասին: Այսինքն թե ինքը մտադիր չէ լքելու Ռուսաստանի մայրաղաքը:

Հիշեցնենք, որ Հայ եկեղեցու Հայաստանի եւ ԱՊՀ թեմերի հոգեւոր առաջնորդները, ըստ Մայր աթոռի կանոնադրության, պատշոնի նշանակվում եւ ազատվում են Ամենայն հայոց կաթողիկոսի հրամանով:

Հայաստանի բնակչության 20 տոկոսը թերասնվում է

ՀՈՌՄ, 16 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՍՊԱՆ: «ԱՊՀ երկրները պարենի պակաս են զգում՝ կապված քաղաքական ու տնտեսական անցումային գործընթացների հետ», - ասված է պարենի ու գյուղատնտեսության միջազգային կազմակերպության՝ հոկտեմբերի 16-ի՝ Հռոմում հրապարակված զեկույցում: Ըստ «Ազատություն» ռադիոկայանի, կազմակերպության գլխավոր տնօրեն Ժակ Դյուուֆը ասել է, որ առանձնապես մտահոգիչ է իրավիճակը 4 երկրներում՝ Հայաստանում, Վրաստանում, Տաջիկստանում եւ Ուզբեկստանում, որոնք խիստ տուժել են այս տարվա երաշտից: ՍԱԿ-ի կողմից նշվող պարենի համաշխարհային օրվա առիթով հրապարակված այդ զեկույցում նշված է, որ «4 երկրներում՝ Հայաստանում, Ադրբեջանում, Վրաստանում եւ Տաջիկստանում բնակչության առնվազն 20 տոկոսը տառապում է թերասնումից»: ԱՊՀ երկրներում իրավիճակը առավել լավ է Բելոռուսում, ուր թերասնումը 2,5 տոկոս է, այսինքն համեմատելի է տնտեսապես զարգացած երկրների մակարդակի հետ:

Ստեղծվում է նոր նավթային գիգանտ

ՆՅՈՒ ՅՈՐՔ, 16 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՍՊԱՆ: Հոկտեմբերի 15-ին մեծությամբ երկրորդ ամերիկյան «Շեւրոն» նավթային ընկերությունը որոշում է ընդունել իր մրցակից Texaco-ի բաժնետոմսերի վերահսկիչ փաթեթը ձեռք բերելու մասին: Գործարքն արժեցել է 35 միլիարդ դոլար: Ընկերությունը ղեկավարելու է «Շեւրոնի» նախագահ Դեւիդ Օ'Ռեյլլին: Փոխնախագահը կլինի "Texaco"-ի ղեկավար Փիթեր Բիջուրը: Բացի այդ, «Շեւրոնին» հարկ կլինի սանձնել մրցակցի պարտային պարտավորությունները: Մասնագետները նշում են, որ նախատեսվող միաձուլումը կհանգեցնի մեծությամբ չորրորդ նավթային ընկերության ստեղծմանը աշխարհում:

Վճռորոշ գագաթաժողով Եգիպտոսում

Սկիզբը էջ 1

Սա նույնպես իրականություն դարձավ Քլինթոնի պահանջով: Երկրորդ զարգացումը մարմնավորվեց ենթենական Ադեն քաղաքի նավահանգստում ամերիկյան ռազմանավի պայթեցմամբ, սպանվեցին 17 եւ վիրավորվեցին 36 զինվորականներ: Այս միջադեպը, որն ամենայն հավանականությամբ ուղղակի կապ ուներ պաղեստինա-իսրայելական վերջին իրադարձությունների հետ, սպառնում էր նորանոր հարվածներ հասցնել Արեւմուտքի եւ հատկապես ԱՄՆ-ի շահերին: Երրորդ զարգացումը, որ 2 նախորդների հետեւանք էր, նավթի գների կտրուկ աճն էր, որը մի օրում 3 դոլարով բարձրացավ՝ տակառի գինը հասցնելով 36 դոլարի: Սա, իր հերթին, Արեւմուտքին հիշեցրեց այն ծգնաժամը, որն առաջացավ արաբ-իսրայելական 1973 թ. պատերազմի օրերին, երբ արաբները գործադրեցին «նավթային զենքը»:

Բացի այդ, միջազգային հանրությանը չափազանց անհանգստացնում է նաեւ լիբանանա-իսրայելական ճակատում ռազմական գործողությունների վերսկսման հնարավորությունը: Այս մտավախությունն առաջ եկավ, երբ գերի վերցրին իսրայելցի 3 զինվորների, ինչին հետեւեցին Թել Ավիվի սպառնալիքները Բեյրութի եւ Դամասկոսի դեմ: Ի դեպ, հոկտեմբերի 15-ին «Հզբոլլահի» ընդհանուր քարտուղար Հասան Նասրալլահը հայտնեց, որ իր կազմակերպությունը գերել է նաեւ իսրայելական հետախուզության մի գնդապետի: Միեւնույն ժամանակ կիրակի օրը, Հորդանանի կողմից կրակ է բացվել իսրայելական մի պարեկախմբի վրա, վիրավորվել է 2 զինվոր: Այս դեպքը մտահոգիչ է 2 առումով: Նախ, Հորդանանի ազգաբնակչության գրեթե կեսը պաղեստինցի փախստականներ են, առա՝ Ամմանն ու Թել Ավիվը 1994 թ. խաղաղության պայմանագիր են ստորագրել:

Անդրադառնալով Շարմ Շեյխի վերոհիշյալ յոթնյակ գագաթաժողովին, նշենք, որ հազիվ թե լուրջ արդյունքներ արձանագրվեն՝ նկատի ունենալով հակամարտ կողմերի հակասական դիրքորոշումները եւ պայթյունավտանգ ու փխրուն իրադրությունը պաղեստինյան հողերում:

Tacis

BUSINESS SUPPORT CENTER

BSC

առաջարկում ենք

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- *Բաժնետիրական ընկերությունների, ՍՊԸ-ների, հասարակական կազմակերպությունների, հիմնադրամների*

ԳՐԱՆՑՈՒՄ ԵՎ ՎԵՐԱԳՐԱՆՑՈՒՄ

- *Հարկային օրենսդրության վերաբերյալ խորհրդատվություն*
- *Իրավաբանական անձանց /առեւտրային, ոչ առեւտրային/ կանոնադրությունների, պայմանագրերի եւ այլ իրավաբանական փաստաթղթերի կազմում*
- *Ձեռնարկատիրական եւ հարկային օրենսդրության վերաբերյալ իրավական դասընթացների կազմակերպում*
- *Իրավաբանական անձանց իրավական սպասարկում*

Երեւան, 375002, Մոսկովյան փող. 24, բն. 2
Հեռ./Ֆաքս - 52 82 79, 52 86 54, 56 10 64, 71 82 (կառ.), 151 934 (AT&T)
e-mail: bsc@bsc.am
Internet: www.bsc.am

OPEN SOCIETY INSTITUTE ASSISTANCE FOUNDATION-ARMENIA

CAMBRIDGE COLLEGES HOSPITALITY SCHEME FOR CENTRAL AND EASTERN EUROPEAN SCHOLARS

Cambridge University in conduction with the Open Society and the British Council invite applications from scholars from selected countries in Central and Eastern Europe and the former Soviet Union, including Armenia. Scholars will be of post doctoral or equivalent status and will be faculty members of universities or research institutes who wish to work in the libraries or contact academic specialists in their subject. The programme offers one-month visit in one of the Cambridge colleges during the summer month (July-September, 2001). The scholars will receive free accommodation and meals plus small allowance for photocopying, books and personal and travel expenses.

Applicants must have a good knowledge of spoken English. Priority will be given to those completing work for an advance degree or working on a specific project such as a book or a new course of lectures, and those who have not previously had a chance to study outside of countries of the Former Soviet Union or Central and Eastern Europe.

Details and application forms can be obtained from:
OSIAF Armenia
1 Pushkin Srt., apt.2
Yerevan, Armenia
Tel: (374 1) 542119; 541719; 543901

Completed application forms should be returned to the OSIAF Armenia office by 23 November, 2001.

WWW.WEBNET.AM

Առաջին INTERNET- կատալոգը Հայաստանում

Արտադրություն, հասարակական սնունդ, առեւտուր, ծառայություններ եւ տպասարկումներ, տուրիզմ, սպորտ, հաղորդակցություն, էլեկտրոնիկա, արվեստ, մշակույթ եւ այսպես ավելի քան 50 ոլորտ:
Ներկայացրեք Ձեր բիզնեսը եւ գործունեությունը շուրջ 40.000 ծառդու մեր երկրում եւ 700 միլիոնի աշխարհում:

Զանգահարեք 56 63 67, 40 19 71:

Այցելեք webnet armenian online catalogue-ի գրասենյակ Աբովյան 16 (նկարիչների միության շենք):

ՀԵՌՈՒՍՏԱՑՈՒԱԳԻՐ

17 հոկտեմբեր

9.00 Հայլուր
9.20 Հեռուստասերիալ «Մեղրերի թողություն»
10.10 Փաստագրական շարք «Վերջին օրը». «Կոլին եւ Նունգեսերը»
10.30 «02»
11.00 Գ/Ֆ «Խաղ միլիոնի վրա» (Մուսասատան)
12.40 Բարի ախորժակ
13.00 Հայլուր
13.20 Հիթ շերթ
13.45 Սանրամասներ
17.00 Հայլուր
17.20 Մեզամ, բացվիր
18.00 9.դ հրաշալիք
18.40 Դետեկտիվի ժամ. «Սահ բեմի վրա» (Մեծ Բրիտանիա)
20.35 Տունտունիկ
21.00 Հայլուր
21.40 1 լուր
21.50 Անկախության այբուբեն
22.05 Հեռուստասերիալ «Մեղրերի թողություն»
23.00 Ռուբիկոն+
23.40 Հայլուր
00.00 Հայլուր (ռուսերեն)
00.05 Հայլուր (անգլերեն)
00.15 Կեսգիշերային ծեղրնթաց
01.00 Գ/Ֆ «Սերը Գերմանիայում» (Լեհաստան-Գերմանիա)

ՊՐՈՄԵԹԵՎՍ

08.00 «Բարի լույս, Հայաստան» (8.30, 9.30 Լուրեր)
10.00, 18.05 Սերիալ «Սորենա Կլարա»
17.00 Մուլտֆիլմ
17.20 Սանկական ժամ. «Նինձյա կրիաները», «Գարդենարիններ, հասաջ»
19.00 Երաժշտություն
19.10 «TV լոտո»
20.00, 24.00 Լուրեր
20.35 Օրը
21.35 Հեռուստաֆուտբոլ
22.00 Համերգ
22.30 «Ձեղնահարկ»
22.50 Գ/Ֆ «Պարտիզոպանի տունը»

09.30 Սուրհանդակ (կրկնություն)
10.00 Տոմար
11.30 Հեռանկար (կրկնություն)
19.05 Շղթիկ
19.30, 21.30, 00.00 Սուրհանդակ
20.00 Մուլտֆիլմ
20.10 Դմայիլ
20.30 Սարդարեզ
22.05 Գ/Ֆ «Օպերատիվ կենտրոն» (մարտֆիլմ)
00.35 Ակնթարթ
00.40 Գ/Ֆ «Վերջին գայթակղություն» (թրիլեր)
(Ավարտին Սուրհանդակ)

7.00 Բարի առավոտ
10.00, 16.00, 19.00, 01.10 Նորություններ
10.20, 17.55 Սերիալ «Բաբելոնյան աշտարակ»
16.20 Մուլտսերիալ «Ուղվական որսացողները»
16.45 «Լեռան արքան»
17.15 «Մինչեւ 16 եւ բարձր
19.25 Սերիալի դրեմիերա. «Հուլիվուդի վարի աստղերը»
20.00 Ինչպես է դա եղել
20.40 Սերիալ «Սահաբեր ուժ»
21.50 Բարի գիշեր, երեխաներ
22.00 Ժամանակ
23.00 Գ/Ֆ «Երկնի բանալիները» (դերերում Ս. Լենկով, Վ. Սեբարաք, Զ. Վիխորեւա, 1964 թ.)
00.35 Քաղաքակրթություն
01.25 Դետեկտիվ «Սայլ Համմեր»

7.00, 8.00, 9.00, 10.00, 12.00, 15.00, 18.00, 21.00, 00.00 Լուրեր
7.15-9.40 Բարի լույս, Ռուսաստան
7.20, 8.15 Ընտանեկան նորություններ
7.50, 9.50 Քաղաքային նորություններ
8.30 Հարցերի բյուրո, պատասխանների բյուրո
8.50, 10.15 Սեւով սպիտակի վրա
9.30 Սանրամասներ
10.20 Հերթապահ բաժանմունք
10.35 Մուլտսերիալ «Դինկի տունը»
11.00 Սերիալ «Մանուելա»
12.30 «Սանտա Բարբարա»
13.30 Թոք-Շոու «Ինչ է ուզում կինը»
14.00 Նոր «Հին բնակարան»
15.30 «Սեւ մարգարիտ»
16.25 Սերիալ «Հարուստներն ու նշանավորները»
17.20 Սերիալ «Հասարակ ճշմարտություններ»
18.30 Գ/Ֆ «Գաղտնիքներ» (ԱՄՆ)
20.00 «Միտ պատմություն»
21.30 Սանրամասներ
21.50 Բորիս Շչերբակովը. Լյուբով Պոլիշչուկը «Երրորդն ավելորդ չէ» ֆիլմում
23.20 Ելենա Մասյուկի հեղինակային ծրագիրը
00.30 Լուրերից հետո
00.40 Հերթապահ բաժանմունք
00.50 Տղամարդը եւ կինը. Անատոլի Պերեսաղվին
01.45 Գ/Ֆ «Գայթակղություն» (ԱՄՆ)

Շտապ վաճառվում է ГАЗ-24 ավտոմեքենա: Բարվոք վիճակում: Զանգահարել՝
52-14-95 (ժամը 10-18)
53-67-26 (ժամը 18-22)

@rmineo Global Telecommunications

Ինտերնետ ծառայություններ «ԻՆՏԵՐՆԵՏ» սրճարանում: Խանջյան 50: Հեռ. 575823:

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արշակունյաց 2 Գրանցման թիվ 65. Դասիչ 69150. Պատուեր 1343 Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 16. 10. 2000 Գինը՝ 100 դրամ